

# ԲԱԶՄԱՎԵՊ

## ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

### ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

#### ՀԱՅԱԳՐԴՆ

ԵՒ ԻԻՐ ԱՌ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ ԸՐԱՎ ՕԳՈՒՏՏՆԵՐԸ

(Տեղ Պր. Ա. էջ 3.)

#### ԳԼՈՒԽ Դ.

Վաճառք և վաճառականութիւն Հայոց. — Նաւարդիել և շամարային ձանապարհ. — Նախանձեցիւառք. — Այսուրին և ներքին Շահապահը Հայոց. — Հայ ազգին տոգեցուրիմք իւրաքանչակից կամ մանաւանդ հիւսիսական ժողովրդոց վրայ:

Հայ ազգն, արդարեն, ոչ Եփիպտոսի հաւասար քաղաքականութիւն ունեցած է, ոչ Ասորեստաննեաց և արիական ազգաց զինուորական մեծ զօրութիւնն և ոչ Հելենացւոց գեղեցիկ արուեստից և մատենադրութեան ճաշակն: Այս անկեղծօրէն խոստովաննելու ենք, Արկայն չենք տարակուսիր բսիկ՝ թէ ՚ի վաճառականական տուրեառութեան՝ գրեթէ այն ազգաց և ժողովրդոց հետ ջանացած է միշտ զուզբնթանալ, անյիշատակ ժամանակաց ՚ի վեր, ինչպէս կ'ընթանայ այս ժամանականերու: Մանաւանդ թէ հայ ազգը վերցիշեալ ազգաց վնասներն ալ չընելէն զատ ուրիշ ժողովրդոց, օգտակար և ձեռնատու լազ է մարգկութեան զանազան տեսութեամբ ևս:

Պրակ. Բ.

Յիրաւի, Ա. Գրոց համաձայն՝ նոյն իսկ արտաքին պատմագրութիւնն կը ցուցընէ, թէ նախ՝ Եղիպտացւոց Փարաւոններն, այսպէս նաև Ասորեստանեաց Նարուգոդոնոսորքը, ուրիշ ազգաց կամլաւ ևս ըսելով մարդկութեան մի մասին կործանման և համայնաջինջ աւերակացը վրայ կանգնեցին իրենց պետութիւնը. Երկրորդ, նոյն իսկ զանոնք իրենց աշխարհը գերի վարած ժամանակ՝ յետին թշուառութեան մէջ պահեցին. Երրորդ, իրենք աւելի այն նուաճեալ ժողովուրդներէն օգտեցան, քան թէ աննոնք իրենցմէ: Վասն զի իրբեւ ստրուկ՝ ձրի տառապեցուցին զանոնք Մեծմիխսի, Թերեւի, Մերովէի, Բաբելոնի, Նինուէի, Եկրատանայ, Շօշի և Եփրատայ մեծագործութեանց վրայ:

Իսկ ընդհակառակն, ինչպէս նախ նարար տեսանք, հայ ազգը նախ դադախականութեամբ կամբնական աշխարհ հակալութեամբ տիրեց հիւսիսային և արևմտեան կամ Փոքր Ասիոյ ժողովը. Պատուաց և զարգացոյց. Բ, նոյն իսկ իւր զօրաւոր աշխարհակալաց (Արամայ,

Արտաշիսի Ա. և Միջին Տիգրանոյ )  
ժամանակ, սրբ և հրու աւերմունքն  
աւելի՝ մարդուսիրութիւն և քաղաքա-  
կանութիւն ծաւալց ՚ի նոսա :

Գայով ուղղակի վաճառականու-  
թեան մասին, այն վերոյիշեալ ազգերն,  
այսինքն Եղիպատացիք, Ասորեստանցիք,  
և Պարսիք, զրեթէ Ասիոյ ծաղկածու-  
թեան հարաւային և արևելեան սահ-  
մանածայրերը կեցած, ոչ միայն չէին  
կրնար զիւրաւ իրենց քաղաքականու-  
թիւնն և վաճառքը առ հիւսիսական  
և արևմտեան ժողովուրդու տարածել,  
վասն այլ և այլ խափանարար պատ-  
ճառաց կամ պակասութեան միջոցաց  
ժամանակին, այլ նոյն իսկ ըստ վկա-  
յութեան չէրէնի և Ստրաբոնի <sup>2</sup>, Ե-  
ղիպատացիք երկայն ժամանակ արդիլ-  
ցին անդասին օտար ազգաց իրենց  
աշխարհին հետ առեւրացան հաղոր-  
դակիցութիւնքն ընդ Նեղոս գետ և ընդ  
ծով, իսկ Պարսիքը <sup>3</sup> Եփրատայ նաւ-  
արկութիւնն և անոր անցքը դոցած  
պահեցին մինչև ցՄեծն Աղեքսանդր,  
որ վերատին բացաւ, Բայց կըսուի թէ  
յետոյ ժամանակաւ գարձեալ գոցեցին:

Իսկ Յունաց համար՝ կրնանք ըսել  
թէ յարեմուսու գեռ անծանօթ և ան-  
քաղաքականացեալ վիճակի մէջ էին,  
երբ Հայաստան քաղմատեսակ բերքե-  
րով բարդաւած՝ զրեթէ հնոյն Ասիոյ  
աշխարհագրական և քաղաքականու-  
թեան կեդրոնը կեցած, իւր զործու-  
նեայ վաճառականութեամբը, հարա-  
ւէն քաղաքակարթեալ ժողովուրդներն և  
աշխարհքը, իսկ Հիւսիսէն և յարիմուից  
անքաղաքականացեալ ազգեր իրեն հետ  
կը միացնէր: Հայաստանի վաճառուց և  
բերոց գլխաւորներն միայն առնելով ՚ի  
տոհմային և օտարազգի մատենադրաց՝  
կարեոր կը համարինք ՚ի հարեանցի  
ասա յիշատակել. որք են սեկ, մուշ-  
տակ, անօմք պղնձի և երկալի, զէնք:

1. Քաղաք. և գաճառակ. ազգ. հա. թ. Ա. հա-  
տած. Վ. գլ. ՚ի. էջ 132.

2. Վերք ժի. էջ 729.

3. Ստրաբոն, Ժ. էջ 1075: Ֆորմանէն ի-  
մաստ. և քաղ. պատմ. գաղթակ, Յուհաց, հա.  
Ա. գլ. ՚ի. էջ 225:

Կտաւք, գորգ, ասուի, մետաքս, արջառ,  
ոչիսար, այծ, Նիսեան ըսուած ընտիր  
ձիեր և ջորիներ. աղած ձկան, պառղը,  
արմանիք ներկոց և գեղոց, կիւ կամ  
ձութ, մատուտակ, գղթոր, խաշըն-  
դեղ, գաղպէ, որդան կարմիր, աղ,  
կարագ, պանիր, գարի, ցորեան, խոտ,  
և 300էն աւելի ընդեղէնք, իւղ կտա-  
ւատի, իւղ գառն բևեկնի և նշց, գինի,  
բորսկ, կապար, երկաթ, պղինձ, ար-  
ծաթ, զառնուկ, մագնիս, երկաթ,  
զինկ, հայկաւ, հայքար, պաղալտ,  
խանձաքարինք, օձաքար, արգեսեան  
քար, բիւրեղ քար և հանքային ջու-  
րեր:

Յետյիշելց փոքր ՚ի շատէ զվաճառս  
Հայաստանի, տեսնենք այսուհետեւ ու-  
շի ուշով վաճառականութեան գծերն:

Ա. Հարաւէն նաւարկելի գետն՝ էր  
Եփրատ գետ, որ ընդհանրապէս կը  
կապէր զշայաստան ընդ Ասորեստանի <sup>1</sup>  
և ընդ Միջներկրականին: իսկ կարաւա-  
նի կամ ցամաքային ուղին, զոր պիտի  
տեսնենք յետոյ, կը տանէր զշայս յԱ-  
սորիս, ՚ի Միջնագետս, ՚ի Փիւնիկաստան <sup>2</sup>  
և յեղիպոս իսկ:

Բ. Գիծը կը կազմէին յարեկից Ե-  
րասին և կուր գետերն, որոնք կը կա-  
պէին զշայաստան ընդ կասպից կամ  
Վրկանայ ծովուն, և ասկէ անդին  
կը ձուէին մինչև ՚ի Բակտրիա և ՚ի  
Հնդկաստան <sup>3</sup>:

Գ. Յարեմափից հիւսիսոյ Փասիս գետը  
կը կապէր զշայաստան ընդ Փանասոփ <sup>4</sup>  
կամ ընդ Ան ծովի հնչպէս Պիւռամիս և  
Ստրոս գետք ընդ Միջներկրականի՝ արե-  
մոեան հարաւային կողմէն:

Ա. Հաւասարիկ Հայաստանի վաճառա-  
կանութեան նաւարկելի և զիմաւոր  
գծերն, որոնք կը ներկայացրնեն զշա-  
յաստան իրեն Եերակղզի ինչքարձրա-  
ցեալ ՚ի մէջ երեք ծովոց. այսինքն է,  
հարաւէն Միջներկրականին, յարեկից՝  
Կասպից ծովուն և յարեմափից ՚Ան ծովու:

1. Հերոդոտոս, Գիւք. Ա.

2. Նշեկել. Խի. 14:

3. Ստրաբոն. Ժի. էջ 509: Պլին. Զ. 15.  
Քանոնափոն, Խարտ կիւր. էջ 149:

4. Ստրաբոն. Ժի. էջ 498:

Ուրեմն Հայաստանի հաղորդակցութեան գումարը բազ էին թէ ծովէն և թէ ցամաքէն՝ ամեն կողմի աղջաց և աշխարհաց հետ Այժմ տեսնենք Հայ հանճարյոն գործունէութիւնն առանձին այս գծերուն վրայ :

Անիշխատակ ժամանակաց՚ի վեր Հարաւային աղջաց հետ ունեցած Հայ վաճառակցութիւնն՝ անժխտելի կերպով հաստատուած իր մ՚է ՚ի Ս. Գրոց և յարեւանեան պատմագրաց : Այսուհետեւ մեզի ուրիշ բան չի մնար, բայց եթէ ըստ նորագոյն տեղեկութեանց բարգաւաճել այս նշանաւութիւնը :

Սակայն նախ քան զամենայն ուղելով անոր ծագումն կամ հնութիւնը հետախուզել, չենք տարակուսիր ըսել, թէ ինչպէս նախապատմական ժամանակի ամեն աղջաց, այսպէս նաև Հայոց ցամաքային կամ կարաւանօք եղած վաճառականութիւնը կանուխ է քան զծովայինը :

Հին աղջաց պատմութիւնն՝ եղիալ տական յիշատակարանք, և արդի արևելագէտք<sup>2</sup>, կը ցուցընեն մեզի թէ ամենէն բացադոյն ժողովուրդը, որոնք եզիպտոսի հետ սերա յարաքերութիւններ ունեցան մը և ժի հարսաւութեան փարաւներուն ժամանակ, այսինքն իսրայելցուց Եզիպտոսէն ել լալէն յառաջ կամ միշտ նոյն ժամանակները, (եթէ Ս. Գրոց այն ժամանակի ֆարաւնը իսամսէս՝ նոյն է ընդ իսամսէսի Գ, որուն յիշատակարանքն ամենուն ծանօթ են այժմ), էին Հայաստանի լերանց յարեւական ցեղէն սերեալ ժողովուրդքը :

Արդ այս սերտ յարաքերութիւնքը պատմաբանօրէն մեկնելով կրնան զինուրական ալ եղած ըլլալ, բայց Հաւանականագոյն է թէ Հայ աղջին և աշխարհին հետ ունեցած վաճառական համարնեն համարդակցութիւնքը կը նշանակեն, որ անմիջական հետևութիւն կրնայ համարութիւնն իսկ զինուրական յարաքերութեանցը : Մանաւանդ

եթէ ըստ վկայութեան Հերոդոտոսի, Միջադետաց հիւսիսային մասն և անդասին ՚ի վաղ ժամանակաց Հայոց կը վերաբերէր :

Այդի քննադատութիւնն զվեսուարիս իրքն պատմական անձն չի ճանչնար, և ոչ իսկ անոր աշխարհակալութիւնն մինչև ՚ի հիւսիսային սահմանաժայրս Հայաստանի, այսինքն է անդրքան զմբույրիկեան և կովկասու լեռները : Այլ մահաւանդ եղիպտական յիշատակարանաց վրայ Հաստատուած՝ զիւցական անուան տակ ծպտեալ ուրիշագաւորներ կը ցուցնէ : այսինքն է թութէս Գ, որ Միջադետաց կողմէն թութեներուն տիրելով թէմենիներուն՝ կամ Արմենիներուն վրայ կարշաւէ իսամսէս Գ, Սեթոս Ա և Ամենովրիս Բ:

Այսմմասին թող բնուած զգարմանան վերծանողը, թէ ինչպէս Եզիպտացիք և Հայոք անբաւ խորոցաւ իրարմէ անջատուած՝ կրնային երբեմն սերտ վերաբերութիւն ունեցած ըլլալ : Վասն զի պատմական հաւաստիք է այս և այնչափ զիւրըմբանելի, որչափ են Մակեդոնացւոց՝ Հնդկաց հետ ունեցած վերաբերութիւնքն, և Հոռվմայեցւոցն ընդ կովկասայիթս : Դարձեալ ինչպէս այժմէ կիլիկեցւոց ժամանակին՝ այսպէս նաև Արշակունեաց և Հայկազունեաց

1. Այս անուան կամ ժողովրեան մասն եղուծ գումարութիւնքը՝ զոր յեշէ և Ամուսն (Պ. 3) Ամաւ կոչելով, իսկ Անիւլաս և Ամաւուն Արքն կամ Արքինո կը թարգմանեն, և այլ թարգմանիչք Արմանա դեռ բոլորվն լրածուած չեն : Արքի բանակարգաց իսկ հասկընան իսկ այլք արարացի եղին կը հասմարին : Սակայն մենք որ առաջ բայարձակ կուսակցութեան և իրք Շմարտութիւն մը մեջ բերինք, աւելի հաւանական է կըսենք Արմենին բնակող ժողովրեան վերաբերը, որուն պատմական ժամանակներն, թագաւորական հարսաւութիւնն, լեզուա և աշխարհը, ըստ բաւականին ծանօթ են և կից ընդ Միջադետաց, քան ուրիշ կարծեցեալ ժողովրեգեամք, որուն ու ծագման, ոչ ազգաբնակութեան, ոչ թագաւորական հարսաւութեան, ոչ լեզուն և ոչ իսկ պատմական ժամանակաց մասն մարթ է գտնել աւանդութիւնն ինչ, առ հին պատմակիրս և կամ ՚ի սեպամէ արձանագրութիւնն :

1. Հերոդոտոս. Բ. Կ. Ճ. Ճ. Է. 179 :

2. Պ. 6իթ, հին, պատ. արև. աղջ. էջ 101 :

շընաններուն մէջ անկարելի էր որ Հայոց վաճառականներն յեզիւսոս իսկ տարածուած չըլլային, քանի որ աւելի բարգաւաճը էին:

Սակայն թէ որչափ կրցտն յառաջ երթալ աշխարհակալք Եղիպատոսին և թէ վախճանն ինչ եղաւ, ոյս է անսույզ կէտն՝ և անըւծանելի հանգոյցը մեզի համար: Խնչպէս Եբրայեցւոց, փիւնիկեցւոց և Արդունաւորդաց՝ պյապէս նաև Եղիպատացւոց ծանօթ էին խաղոտեաց, Փասիս գետոյն, կողքիսի և Կովկասուտիեղերահոչակ Հանկաց բովերը, ուր Մեմոն իսկ զրկուեցաւ ՚ի մեծէն Աղեքսանդրէ: Ուրեմն Եղիպատացւոց վաճառականական յարաբերութիւնն որոնց բուն պատճառը վիրջն պիտի զուրցենք ընդդ հիւսիսաբնակ կողմանց, համաձայն ըլլարով հին պատմութեան կամ Հերոդոտոսի աւանգածին և արդի քննազատութեանը, պէտք էր որ հայ ժողովը բեկան հետ աւելի սերտ եղած ըլլար: Վասն զի պատմութիւնն զշայս ծագմանմբ հնագոյն կը ճանչնայ և քաղաքականութեամբ բարգաւաճ քան զամենյն հիւսիսաբնակ ապինս: Արդ եթէ Եղիպատացւոց վաճառականական երթեան կութիւնք սույզ էին ընդ Հայաստանի, պյապէս նաև սույզ պէտք էին ըլլար Հայոց յարաբերութիւնն Եղիպատոսի հետ, իբր անմիջական հետևանք և արգասիք յարաբերութեանցն առաջնոց, Նախապատմական ժամանակաց մէջ՝ Եւ ոյս վաճառականութիւնն ի սկզբան յամաբային ճամբով կըլլար ըստ վկայութեան Հերոդոտոսին և Հէրէնի:

1. Եթիպատացոց Մէրիս թագաւորին համար  
կ'ըսէ Հերոգոսոս. Բ. Գիբը. գլ. ձԱ. Էջ 179,  
թէ Արաբական ծոցէն ելլելովիւր նաւատարմը-  
ւառ կը տիրէ Եթիպարին նզէքն բնակող ժո-  
ղովրդոց, իր խայաց միջն ցծուն, ուր չէ մորթ-  
նաւարկել: Այս պատմառաւ, յԵթիպատոս վերա-  
դառնալով, յԵտոյ ցամուրէն սկսաւ Հայուստա-  
նի քայ Երթար: Համանելով ի՛ Փասիս գետ՝ ա-  
նոնց մի մասը հնու թուզաց, Երկիրն վաճառքը  
յԵթիպատոս զըկենու համար: Արդարեւ յայտնա-  
պէս կը տանձնէի այս պատմական աւանդութե-  
նէն, եթէ չէից այլ նորդ պատման: Թէ Ե-  
թիպատացոց ժողովրդական աւանդութիւնն Հա-  
յառանին հետ ունեցած առևտուրական ձեռնարկ:

Ուղեմն հին և նոր յիշատակարանաց այդ հաւասարիքը ձեռքբերնիս ունենալով իրեւ թել ինչ արիածնեան, կրնակը առանց սխալանաց յառաջ խաղալ նաև խոպատմական ժամանակի պատմութիւնը պատող անստուգութեանց մէջ, և բազմապիսի շփոթութեանց մէջ, և ըսիլ, թէ երբ գեռ երրոյական ժողով վուրդը՝ եղիպտական ծանր գերութեան մէջ կը հեծէր, և հինաւուրցն Տիւրոսի և Սիրոսի պէս մեծահաշուկ շահաստաններն կը փայէին, Հայը իրեւ զուգակից և ընկերակից նոցին և կամ իրբեք հարկատու ժողովուրդ, որ աւելի հաւանական կ'երևի, իրենց այլ և այլ վաճառուց հետ' ոսկւով, պղնձով և նիսեան ձիերով ևս Փարաւաններուն կառքերն և հեծելազօրքը կը բազմացնէին. ինչպէս յետոյ ըստ վկայութեան Հրէից գրոց և Հերոդոտոսի՝ կը ցնծացընէին Սոլոմոնի, Տիւրոսի, Սիրոսի և Բաբելոնի աշխարհահանդէսներն, և Պարսից միհրական տօնավաճառքը,

Հայկազունեաց, այսինքն Արարա-  
տայ և Ասքանագեան թագաւորու-  
թեանց ժամանակին, անոնց վաճառա-  
կանութիւնն ընդ Պաղեստինացւոց՝  
հաւանական կ'երեի, ինչպէս էր ընդ  
փիւնիկեցւոց և Ասորեստանեայց, ըստ  
աւանդելոյ Հրէից գրոց և Հերոդոտոսի,  
Արգարեին նկատի ունելով Սողոմոնի  
աշխարհածանօթ մեծագործութիւնքն  
և բազմագանձ հարստութիւնն աստի,  
և անաի Փիւնիկեցւոց ծագումն և ինչ  
ժողովուրդներէ կազմակերպիլն, Կ'ը-  
սենք թէ Հայոց վաճառականական

Ք. Եաշխարհակալութեին փրած է վկասան  
օրէն: Ուրեմն այսպէս ալ Հայոց Եգիպտոսի  
հետը ըրած վաճառականութիւնն ցամաքէն եղած  
է: Վաստի զի նախի Հայոստան ցամաքային եր.  
իեր ըլլալզ և նաւարդութեան արուեստին գեռ  
գիւրացած ըըլլարու պատճառաւ, շատ բնական  
էր Հայոց պէս անգէորդութեամբ նալիկ ժողով  
ողբեկան, որ Կարաւանիք ընկիւն. Բ Հերեւն կը  
կայոյ թէ Քիւնիկէցիք, ու անուն ցամաքային  
համրու վաճառականութիւն կ'ընկիւն նգիւն  
տոսի հէտ, ինչպէս Յակիմքայ որդուոց Կարաւան  
որք յնդիպատու ինչալուն պատմութենէն իսկ  
կը տեսնուի: Այսպէս ուրեմն և Հայք:

գործակցութիւնն ևս կապակցեալ էին անոնց հետ, որոնք (Հայր) այն ժամանակի հիւսիսային ազգաց մէջ՝ բարդաւաճը էին և համեմատութեամբ քաղաքականացեալք: Բոլորովին և պատմական հաւասարեազ չէ մարթ մերժել Հայոց վաճառականական գործակցութիւնքը ընդ Փիւնիկեցւոց ՚ի Պաղեստին առանց մերժելց զտուրեառութիւն բոլուց հիւսիսակողմանց ՚ի կարսոր և յանհրաժեշտ պէտս հարաւայնոց:

Ուշդնենք այս հետեւալ պատմական վկայութեանն և տրամախոհական եւ զրակացութեանը: Նախ ականաւորն Պոսիդոնիոս և Ստրաբոն<sup>1</sup> կը լսեն, թէ Արագացիք, Սիթոնացիք և Տիւրացիք՝ յԱրմենիներէն, յԱրաբացւոց և յԵրեմացւոց կազմակերպեալ դադիմականութիւնք կամ վաճառականաց ընկերութիւնք էին իսկզբան ՚ի վերայ Միջներկարականի: Այսմ կը միաբանի իւլիք ՚ի նորոց Միքայէլիս<sup>2</sup>: Բ. Փիւնիկեցիք մասնաւոր ազգութիւն մի չըլլալով, ըստ կարծեաց գիտնականաց ոմանց ևս և Հնոց, այլ արդի Զուիցերից նման այլատարը ժողովրդոց խառնուրդ մը, բընականապէս չէին կրցած անգատին միապետութիւն ինչ ձևացնել, այլ իւրաքանչիւր քաղաք՝ առանձին իշխանութեաններ կազմէին իրարևէ անկախ, և երբեմն նշյն իսկ օխսերիմ թըլչնամի միմեանց: Ընդհանրապէս շըլակայ ազգաց վարձուոր զօրքերովիք կը վարուէին, ըստ վկայութեան Փիլ. Շմիթի<sup>3</sup>:

Գ. Փիւնիկաստան նոյն իսկ առ Քիւրամաւ (1130) ամենածագկեալ և զօրաւոր ժամանակին, կը պարունակէր Տիւրոսէն յԱրատոս ձգուած երկիրն, որուն երկայնութիւնն էր հարաւէն գէպ ՚ի հիւսիս՝ ՅՈ փարսախ, և լայ-

նութիւնը 8 փարսախ, կ'ըսէ Հէրէէն<sup>4</sup>, Արեմն այսպիսի փոքրիկ ժողովարդն որչափ հարուստ, ճարպիկ և բազմամարդ համարելու ըլլանք այն ժամանակ, գարձեալ միշտ անհաւատալի կ'երիի թէ միսյն մատակարար եղած ըլլայ Սորուննեան մեծագործութեանց: Ուր թողունք ապա անոնց աշխարհիս ամեն կողմը ընդ ծով և ընդ ցամաք ընթանալն և ամենուրեք յիշատակներ թողունք: Ոյս արգարե կամ շափականցութիւն մի համարելու ենք պատմեշաց և կամ կայ իր ինչ խորհրդական զոր ժամանակն և պարագայր մեզմէ ուղած են ծածկել. ըսել կ'ուղեմ թէ հաւանօրէն ՚ի ձեռն դրացի ազգաց կը գործէին, ինչպէս կը տեսնուի թագաւորութեանց գրքերէն և Յիշաւապոսէն:

Իրաւցնէ Բնշպէս չի տարակուսինք այդ վաճառաշահ ժողովրդեան և անոր ընծայեալ գործունէութեան վրայ, թէ ըստ վկայութեան Յովսեպոսի<sup>5</sup> միայն Լիբանանու գործաւորաց թիւն 183,000ի կը հասնէր, և նաւերով եկած սուկոյն չափն էր 666 տաղանդ, առանց հայուելու վաճառականներէն առնուածն և Ասիոյ իշխանաց ընծայքը:

Ուստի այս և ասոնց նման ուրիշ պարագաներ ՚ի նկատի ունելով, շատ հաւանական է կարծել թէ ինչպէս Լիբանանու կամ Փիւնիկեցւոց զործաւորաց և քարահատաց, այսպէս ալ վաճառականաց մի մասն Հայոց, Թովրէիի, և Կապագովիկեցւոց վաճառականքն ըլլան:

Հերակլիսի արշաւանքներն Միջներկարականի կղզեացը մէջ, ՚ի Սպանիա և յԱֆրիկէ, ըստ արդի քննադպատռութեան գիտնոց իբրև ծովային վաճառականութեան և ցամաքային զաղիմականութեանց ասոյց ձեռնարկութիւններ ընդունելով այնուհետև կ'ըսենք թէ պատմական հաւաստիք մը կը հաստատէ մեր վերոյիշեալ ենթագրութիւնքը, այսինք թէ Փիւնիկեցիք իրաւցնէ յԱրաբացւոց, յԱրմենիներէն, յԵրեմբացւոց և ՚ի Մարաց կազմակեր-

1. Քիւր. քջ. երես 1131:  
2. Spicileg. geograph. Hebr. exter. vol. 1.  
p. 1162:  
3. Այս գտնականը իւր Հին պատմ. ազդ. էջ 661 կամ թէ Տիւրոսի նաւաստեաց և զօրաց մէջ կային նաև ուժեղ լըռնաբնակը ՚ի բարձր Հայոց:

պեալ ժողովաւրդք էին, և թէ գաղթա-  
կանութեամբք տարածեցին իրենց վա-  
ճառականութիւնն հարաւային արե-  
մտեան աշխարհաց մէջ, յանուն Հերա-  
կլէսի գաղթականութեան սոսկ անձ-  
նաւորութեանը կամ նշանադրոցմին,  
թէպէս և արդի գիտնականաց շատերն  
այլազգ կը մեկնեն զանուան ազգացգ:

Սալուստիոս (Յուգ. 48) ըստ վկա-  
յութեան թագաւորին թուպաց ամե-  
նահին աւանդութիւն մը մէջ կը բերէ  
Նումիդացւոց և Մաւրաց կամ Մաւ-  
րիտանացւոց ծագման մասին, որ կ'ը-  
սէր, թէ Պարսիկք, Արմէնք կամ Հայք,  
և Մարք կամ Մետացիք, որք առաջնոր-  
դութեամբ Հերակլեսի անցած էին՝ ի  
Սկանիա, ապա ժամանակաւ յառաջն-  
ցին յԱփրիկէ, և ծագումն տուին Նու-  
միդացւոց և Մաւրաց կամ Մաւրիտա-  
նացւոց, որ Մեկ կամ Մարք արմատա-  
կանէն յառաջ կու գայ:

Այս աւանդութիւնս ոչ միայն յարե-  
մուսա, այլ և բոլոր արևելեան ազգաց  
մէջ Կենդանի կը պահուէր: Մ. Խորենա-  
ցի որ թերես և ոչ իսկ Սալուստիոս կար-  
դացած է, իւր Ա. Գրոց ԺԹ զիսուն  
մէջ կը յիշէ մի և նոյն աւանդութիւնն,  
Դանների գտնուած հին արձանագրու-  
թենէ մառնելով, որուն կը համաձայ-  
նի ապա Պրոկոպիոս 'ի Բ. զիրսն վան-  
դալաց:

Մարք արմատականին բանասիրական  
մեկնութիւնն, որ ստուգաբաննելով  
կրնայ հաւասարիք համարուիլ այն ժո-  
ղովրդական աւանդութեան ստուգու-  
թեանը, օրինակ մը մէջ կը բերէ Պ. Լէօ-  
նիէ, Մ. Խորենացւոց և Հայոց պատ-  
մութեան վրայ յօրինած բանախօսու-  
թեանը մէջ, զոր ընթերցաւյամին 1838  
պատմական յանձնաժողովյն ներկա-  
յութեամբը, ըսելը թէ Պրէդոննե-  
րու և Կեղուաց ծագման մասին ամե-  
նայն կերպ ենթադրութիւններ և ընդու-  
նայն ճիգ հնարելէն յետոյ, բանասէրք,  
որ մը մասածեցին հարցընել կալէսի  
բնակչաց, թէ ինչպէս կը կոչուին: Պա-  
տմախաննեցին թէ Քիմրի: Ռւստի մէ-  
կէնիմէկ կիմրացւոց մերձեցուցին այդ

բառը: Ապա անցան Տակիտոսի մէկ  
յիշատակութեանն, որ կ'ըսէ թէ կիմ-  
բրացւոց լեզուն նման է Բրիտանացւոց  
լեզուին: Եթեոյ մի և նոյն Պոսիդոնիո-  
սի վկայութիւնը մէջ բերուեցաւ, զոր  
քիչ յառաջ յիշեցինք, որ կ'ըսէ թէ կիմ-  
բրացիք, և կիմմերիացիք մի և նոյն ազ-  
գէն էին: Այսպէս ուրեմն 'ի Բրիտանիոց  
անցնելով 'ի ծովն Պալդիկ, և Պալդիկ  
ծովէն յափունս Եվբալիեան Պոնտոսի,  
և Հարցընելով զիարատս կամ Բրաազիխո,  
իմացան, թէ անսնք և անսնց հայրենա-  
կիցըն յԱփրից զաղթած էին: Մէկ բա-  
ռով մը գտնուեցաւ այնպիսի անակնու-  
նելի ճշմարտութիւն: որ գեռ մէկու մը  
մոքէն չէր անցած: Յիրաւի, Հայոց ոչ  
միայն Ցիրացաց հետըրած վաճառա-  
կանութիւնն յիշատակուած է Եղեկիէլ՝  
մարգարէէն, զոր և Սարաբոն կը հաս-  
տատէ, այլ նոյն իսկ ընդ Պաղեստի-  
նացւոց և Միջադեռոց, եթէ Հրէկից  
միւս աւանդութեանցն և թագաւորու-  
թեանց գրոցն ուշ գնելու ըլլանք:

Ոփիր կամ Սովիկեր գաւառին ըն-  
տիր ոսկին, որ 1500էն արդէն ծանօթ  
էր Հրէկից և Հնգամատենի հեղինա-  
կին, որուն համբաւն և նոյն իսկ փայլը  
յեզիկառու եղած ժամանակ լսած և  
տեսած էին անշուշտ, Մովսէս իրրե-  
հնագոյն աւանդութիւնն մի և պատմա-  
կան հաւասարիք մէջ կը բերէ:

1. Իէ. դլուս. 14:

2. ծ. գիբր. էջ 558, 587:

3. Ի ատարաձյունութենի այլ և այլ թարգմա-  
նութեանց Ս. Գրոց, որոնց ոմանց մէջ Սովիկեր  
դրուած ըլլանք և ոմանց Ոփիր, բանասիրաց  
ոմանց 'ի Ծոդիկս համարեցան զայն: Սակայն  
մէնք առանց ժետակեր գյունութիւնն Ոփիր ա-  
շուան և կ'զամանէ մէջ Ծննդոց գրոց  
Սովիկերը Հնգամ Ոփիրն Բարդը Հայոց արեմք-  
րեան և Խաղուեաց ասամանակից գտաւան և ս  
կրոնց համարուիլ: Վասն զի Մովսէս դրախ-  
մին և անոր գետոցը նկարագրութեան մէջ Փա-  
սիս կամ Փասն գետին բով կը գնէ: Խա որով-  
չեան այժմ ևս նշոյնէս կը գտնենք, և Ապիհին  
հետ արդի աշխարհագիրք առհասարակ կը  
հաստատեն թէ Իրախանին տեղն 'ի Հայատան  
եղած է բրացընէ և ոչ բարե: Բ. որովհետեւ  
Սարաբոն, Պիոդոր Սկիք. Դիբը, Հերոդոտոս  
գլ. Խ. Կամէթ և այլք այնպէս կը հաստատեն,  
բայց մայն անուանց փոքր ինչ աղաւալպո-  
թեամբ: այսինքն է, մէկը Միսրէբիտիս, կ'ըսէ,  
մւսը Սիստր, օմն՝ Ապրէր և այլ սմն՝ Սասրէր:

Հայր ևս կարծուի թէ Արարատ գաւառին և խաղտեաց բալիքէն հանած մետաղաց հետ կը զրկէին նաև մարմարին, զսուտակ և զդահանակ բառած քարերն, և զպատուական ձիս և զջորիս տանէին ՚ի վաճառ և ընծայ: Այս ենթագրութեանս հաւասարիք են արդարեւ Յովսեպսի՝ այս խօսքերն, որ կը վկայէ թէ երբ Սովորնն լմնցոց տաճարի շինութիւնը, ամենայն իշխանք և թագաւորք, ըստ իւրաքանչիւր բերոց աշխարհնեն ոսկեղէն անօթներ, ակունքներ, անոշահոտ իւղեր, կառքեր և ծիեր և ջարիներ կը ընծայէին անոր, այնպէս որ իւր ունեցածին վրայ աւելան 400 կառք ևս և անօթի երիվարաց բազմութիւնք: Սակայն ինչպէս թուրգումայ տանը կամ Արարատեան թագաւորութեանն, այսպէս ալ անոր հողի վրայ անած ամենագեղցիկ կենդանաց համբաւն Հրէից ամենուն ծանօթ ըլլալով, ըստ վկայութեան Մարգարէին<sup>2</sup>, անոնցմէ աւելի յարդի ընծաներ չէին կրնար ընել հայկազունիթագաւորք մեր և բոլոր Արմենից նախարարներն:

Հայոց՝ ֆիւնիկեցւոց հետ ունեցած վաճառականութիւնն, որչափ որ Եղեկէլ ընտիր ձիերու և չորիներու յիշատկութեամբը ծանուցանելով կ'անդնի, սակայն ամենահաւանականն է թէ այս հետեւալ վաճառուց սուրեւառութեամբն և կէտերով և նշանաւոր էր: Նախ՝ ֆիւնիկեցիք ծովային վաճառականք ըլլալով, դիւրաւ չէին կրնար ցամաքային ճամբուլ հիւսիսայնոց հետ հազորդիւ ուստի այն ժամանակի զօրաւոր միջնորդն և անմիջական հազորդիչքը՝ Հայր էին: Արդարեւ, Փոքուն Հայոց, կեսարից և Միջնադեսուց և անոնց սահմանակից հայ վաճառականքն կը լեցընէին անոնց պէտքերն: Հայր իրենց ձիերու, ջորիներու, արջառու և ոչխարի հօսերուն հետ ՚ի միասին՝ կը տանէին ՚ի վաճառ, նաև աղ, բորակ, որդուն կարմիր, հայկաւ, ներկ, արմօխս, ընգե-

ղէնք, ցորեան, գարիք, և խոտ, որոնց մեծապէս պէտք ունէին ֆիւնիկեցիք: Բ. Հայր բաց ՚ի ցամաքային վաճառականութենէ զոր աւնէին ընդ Տիւրացոց, կը յաճախէին նաև Միջնադեսուց կանի և Հնդկային ծոյին մէջ գտնուող ժողովրդոց հետ ես ՚ի առուրեառութիւն վաճառուց: Գ. Պարսից, Լիւդացւոց և Ասորւոց հետ նոյնպէս և Հայոց զօրք ունենալն ՚ի Տիւրոս, որոնք ըստ վկայութեան Հէրէնի և Փ. Շմիթի մէկ կողմանէ նաւարկութեան կը պարապէին և միւս կողմէն՝ զվաճառու ՚ի հինից կը պաշտպանէին, նշան են թէ այս գծիս վրայ արտաքին ամեն շահաստաններէն աւելի, Տիւրոսն էր Հայութթեամբ լի. և անտի կը տանէին նաւառու զվաճառու իւրեանց յազգս հեռաւորու: Եւ իրաւցիննէ Տիւրոս գտնուող վաճառականներն ոչ միոյն պատուականութեամբ վաճառուց հիւսիսակողմանց, այլ նոյն իսկ փարթանութեամբ և պատուով նախամեծարք կը համարուին: Եղեկիէլ, յետ յիշելց զմդորդուեան ազգս և Մինւոյ և ապրանազեան վաճառականքն ես ՚ի մէջ այլազան վաճառողաց, ապա այսպէս կը յաւելու յողբան Տիւրոսի. և Քաղաք պահեալ, որց վաճառականքն են իշխանք, և վաճառողին են պատուականագունուց եւ անդամութեամբ կը տանէին ՚ի կառավարութիւն կարաւանոր ածելով ՚ի կապադովկիոյ, յԱղիաբենաց՝ ՚ի կողքիսէ և ՚ի հանքաց կովկասու՝ զպղինձ և զանագ: Վերջին վաճառքին համար կը ըսեն բազումբ ընդ Փ. Շմիթի, թէ հարաւային աշխարհաց մէջ չէր գտնուէր, այլ հիւսիսակողմանք միայն ունէին: Երկրորդ ֆիւնիկեցւոց

1. Միջնադեսուց այս մասն նշանաւոր էր անդամունի ՚ի վաղ ժամանակաց Հայոց արարուածովք, ըստ Մարտրոնի ՓԶ, էջ 1081. իսկ յետոյ Տիւրանայ ՚ի գտաւզանի ներքին աւելի և հըսկառեցաւ:

1. Նախ. պատմ. հա. Բ. Գիրք է. էջ 106:  
2. Եղեկիէլ թլ. իէ. 14:

վաճառատիկանութեան սկզբանաւորելուն  
և բարգաւաճմանն շարժառիթն՝ այս ե-  
ղած կը համարին, վասն զի ամեն ազգ  
անոր պէտք ունէին՝ մանաւանդ՝ ի հը-  
նութիւն:

Իսկ Եփրատայ և Տիգրիսի ափանցը  
վրայ գտնուող այս բազմմաթիւ քաղա-  
քաց՝ շատերուն մէջ, ծաղկած էր Հա-  
յոց վաճառականութիւնն:

Գիտողորոս Սիկիլիացի, որ թերեւս խոկ  
ականատես եղաւ այս վերջիշեալ քա-  
ղաքներէն շատերուն և քաջահմտու-  
է արևելքան իրաց, վկայ կ'արձանանայ  
հայ վաճառականութէն ըսելով, « Բայց  
Շամիրամ<sup>2</sup> զայլ ես քաղաքս կառոցց առ  
Եփրատու և Տիգրիսի, ուր վաճառա-  
տեղիս ասհմաննեց 'ի նոսա. որբ վա-  
ճառու 'ի Մարաց (Հայոց), 'ի Բարեդպաքե-  
նոյ, և յամեննայն մերձակայ կողմանց  
բերեն ընդ գետս, որբ քաղմօք դիւրա-  
ցուցաննեն զաննապարհս վաճառակա-  
նաց, որով մերձակայ տեղիք գետոցս  
բազում, բաղմահարուստ վաճառատե-  
ղեօք ճոխացեալ կան » :

Բաց ՚ի մերձակայից բառէն , յուրում կ՚իմացուի նաև Հայաստան , որ

1. **Ըստ Պազումնեսի և ըստ հայ Հերոդոտոսի Են՝ Բիբիսոս, Ենթիքա, Քասիբրա, Քորսա, Թաւինիա, Արմանակիրա, Արտաքսատա, Նաբրուանա Հածուա (Ամուս) Տիգրանա Պղրիքա, Սանա, Բրիգակա, Տարախիսա, Գորգիկարա, Կուրինա, Կոլանա (Կորանա), Ցագորւրա (Կացորւրա), Գուլուա, Սոգոկիրա, Փաւսիւա, Փաւզանա (Փաւ- չալիս) Զարուանա, Ակասինն, Վնարին, Սի- գուա, Գերուա (Տերուա), Գուրցուրա (Գուր- ջուա), Մագտաստանյա (Մատուստանյա), Կատո- կնայ (Կատակնայ), Տարինա, Բանիպրիքա, Բարիլս, Սաւրանանա, և Ռշարա (Ազօրա) հիւ- միսային բաժնին մէկ իսկ հարաւային բաժնին Աղբուինի (Աղբանին), Փափսիսիսա, Կորինեա քաւառայ մէջ էին, Խելդերտա (Եղեգերտա), Մազարա, Վնդուս, Սփիստա, Բելզանիսա, Սել- դիքա, Թովսպիտա, Կողջիստ, Սիսանա, Արստմ- ստատ, և Կորա, Ցարեւելանին բաժնին մէջ էին նանաւոր քաղաքները Փատկա (Տասկա). Փոլորա, Մէկա, Բուռնա, Քիվիմս, Տերերիտա Դափիսա- նա Կապուտապ, Արտեմիդիստա (Որսիմիտիքա), Թէրալանի, Սիյայը, Փերենտիս, Տիգրանակեր- տա, Սարդիուա (Սարդիուա), Կոլա, Տիգրան- անա (Տիգրանաստա), Արտաքիքարտա, և այլ ՀՀ պատմութեան մէջ էին.**

2. Ըստ Հնոց սովորութեան, զոր այլուր ցուցինք, պատմիք Համբաւանց կընծայէ այն քաղաքաց շնուռթենք. բայց իրօք այնակէս է:

կից էր Ասորեստանի և Ասորւց, և այն քաղաքներէն շատերը իրեն կը վերաբերէին. նոյն իսկ Բարեղաքենոյ և Մարդառերու կիրառութիւնն յայտնի կը ցուցընեն թէ թէպէտ և յաւէտ արևելքանն Ասիոյ, բայց աստ աւելի Հայոց վրայ առնելու է պատմին խօսքը յետագայ պատճառներովս : Որովհետեւ նախ Դիոդորի Բարեղաքին ըստած՝ Պիհնիսոսի<sup>1</sup> Բրագիք կոչածն է, որ մեր Պարսկահայոց Թրափի գաւառին հետ նոյն կրնայ եղած ըլլալ, և Յոյնք ինչպէս ուրիշ շատ անուանք այսպէս ալ զայս աղաւաղած են : Բ. Մարք ամենահեռու էին աշխարհաւ յեփրատէն՝ ուստի չեին կարող նաւարկել անոր մէջ. և եթէ նաւարկելու ալ համարինք, հարաւէն դէպ'ի հիւսիս պէտք էին նաւարկել: Իսկ այս ոչ միայն Ջրոյն ընթացից այլ նոյն իսկ պատմովենան հակառակ կ'ելլէ: Վասն զի Հերոդոտոս՝ որուն կարծիքն այժմ գրեթէ հասարակաց կարծիք դարձած է, Եփրատ գետոյն միջի նաւական վաճառականութիւնն որոշակի Հայոց կ'ընծայէ, և կը հաստատէ թէ այն գետին ընթացից հակառակ շկարենալով նաւարկել, ցամաքէն ետ կը դառնային :

Սակայն ըստ վկայութեան նորին իսկ  
Հերոդոտոսի և Ստրաբոնի թամիսակն  
կամ թափաք՝<sup>2</sup> որ յԱսորիս, և Բարե-  
լոն՝ յԱսորեստանի, 'ի սկզբանէ 'ի վեր՝  
էին բուն շահաստանք հայ վաճառա-  
կանաց: Հայք առատութեամբ կը բե-  
րէին ընախիր գիննի, զոր ամ յամէ կը  
հասցընէին Գորիթն, Արարատ և Շա-  
կաշէն գաւառները, և կը տանէին նա-  
ւուք 'ի վաճառ: Բարելոն՝ Ամենակա-  
յին զաման բաժանու ոեն, <sup>3</sup> չի ոմաած

- 1 : 9bmm 9 + 15 :


9. Թագավորութեան Դ. 24 թուահամարին  
մեջ յիշուած Թափաս քաղաքին հետ նոյն կը  
համարուի, յորում կ'երթային Սոզաննի նա-  
ևըն Ոփիրի ( Հայոստանի Սրբեր գաւառին  
հիւսիսակողման հանքաց) ոսկին առանելու հա-  
մար:

3. Պասիել կ. գլխուռն մէջ և Փանովիոն՝ ի  
Խրատն Ալւրոսի, միաբան կը հաստատեն թէ  
նախընթաց գիշերն, յորում պիտի առնուեր  
բարեյոն ի Ալւրոսի և հիմնաատակ կողմա

կիպրեան բաժակէն աւելի կընանք ըստ թէ Հայաստանի անուշահոտ և եօթնամեայ գինիներով կը կատարէր իւր ցնծութեան և հարսանեաց տօներն, որոնց համար Հերոդոտոս, Քանոնին, Պինիոս, Ստրաբոն, և 'ի տօնմայնոց Մ. Խորենացին և Ղազար Փարացեցի կըսեն թէ պանչելի էին իրացընէ, և թէ Ասորեստան չէր կարող մատակարարել յինքենէ:

Հայ ազգին և աշխարհին վերաբերութիւնքն Ասորեստանեայց հետ ամենասերտ ըլլալով, կարելի բան չէր որ

միայն գինւով լմբննար անոր վաճառաւ, կանութիւնն, թէպէտ և ըստ Հերոդոտոսի՝ զայն իրրե զլինաւոր և ամենառատ վաճառքն իսկ համարելու ըլլանք: Հերոդոտոս և 'ի նորոց Հէրէն (Վաճակ. և քաղ. արե. ազգ. հո. թ. էջ 256). Կըսեն, թէ Հայոց վաճառականութիւնը բարելոնի՛ էր իրաւցընէ արտաքսյ կարգի: Հայը ասկէ ալ մեծ ծառայութիւն չէին կրնար մասուցանել Ասորեստանեայց: Ասկայն ասոնք ընդ հակառակն զեղծանելով ած էին պիտի շուտով զկործանումն քաղաքին մեծի: Վասն զի այդ




Կաքառ Թալումք:

անթիւ բնակչօք խոկուած երկիրն (Ասորեստան) անբարեբեր ըլլալուն պատճառաւ, ստիպուած էր իւր գանձը ղըրկել՛ի Հայաստան, ոչ միայն իւր կենաց ամենայն կարեոր պիտուքն հոգալու համար, այլ և շապյելով ընդ ազգս բազում, զոր գշխոյն այն քաղաքաց առինքն կը ձգէր միտ քաղմութեամբ: Ասորեստան դաշտական երկիր ըլլալով՝ բնականապէս անհրաժեշտ պէտք ունէր փայտի: Այս պէտքը կը լեցընէին

նուէր, Բաղասար արբեցութեամբ անուշահունիներուն և շուայառութեամբ՝ կ'անցընէր Ասորեստանեայց մեծամեծներուն հետ:

Հայաստանի անտառախիտ մայրէքը՝ զորս հոչակեն Քանոնին, կուինափոս և այլ մատենագիրք Հովվմայեցոց և տոհմայինք մեր: Եւ Հերոդոտոս կ'ըսէ թէ այս երկիրը (Արմենիա) ոչ միայն նշանաւոր է անտառախիտ լերանց ջրդիաներով, որոնք մեծաւ մասամբ անոր երեսը կը բանեն, այլ և հիւսիսային Միջագետով՝, որ հոչակաւոր է իւր բարեբերութեամբքը:


1. Իրաւցընէ սակէ ալ անժխտելի վկայութիւն չի կրնար առև մեր Հայկազունեաց (Թագաւորութեան անկախ միապետութեանը մասին նոյն իսկ առ Յորւանդեան Տիգրանաւ, ինչպէս նաև հայ Հերոդոտոսի աւանդածին՝ ընդ-



Տեսակ կարաւ թռչնոյ (Syrraptes paradoxus).

Հայաստանի ազդի ազդի հաւուց բազմութիւնն որ մինչև ցայսօր աշխարհի մեջ հաշակուած է, մեծահաց և բազմախորսիկ կը յարդարէին նաբուգողնոսութիւնը և Աստրեատանի մեծամեծաց սեղանքը: Նշանաւոր էր նոյնպէս տառելի կամ ապխտած ձկնան վաճառականութիւնը, զոր յիշեն և արեւատեան պատմիչը:

Դիոդորի<sup>1</sup> Սիկիլիացւոյ վկայութեանը վրայ հաստատուած, կ'ըսենք թէ Հայքնաւերով կը տանէին 'ի Բարելոն Արարատայ վէմ քարերն (մարմարինը), զոր յիշէ և Ադամթանգեղոս՝ բակը Ծըրդատայ համար. « ի զլայո լեռնէն (Մասեաց) աւեալ վէմս, արաստոյս, անտաշո, անկոփո, յազթո, ծանունա և մեծամեծս » որոնց երկայնութիւնն



Տառելի ձուկն Աւանայ լք (Cyprinus Tariebi).

Էր 130 ուրք իսկ լայնութիւնը 25: Եւ հմտագոյնն 'ի տոհմային արդի մա-

քէմ Քանոնինի: Վասն զի կամ այն է թէ Հայք 'ի սկզբանէ 'ի վեր տիրած էին Միջագետաց այն մասին և կամ Հերոգոստոսի ժամանակը կը տիրէին: Խոկ արդ եթէ ըստ վկայութեան յշն պատմահօրը տիրած էին կամ կը տիրէին գեռ աշխարհակալութեամբ այն ստարերին բռնութեան, ուրքն անժիանելի են:

տենաղիրս, կը յաւելու թէ բոլոր նինուէի և Բարելոնի հրաշակերսքը Հա-

պլ ստարին լծոյն տակը նուանուած ըլլային, ինչպէս կը նկարագրէ Քանոնին իւր վիպասանութեանը մէջ Ուր թողունք ապս մեր աշխարհ հի մէջ եղած վիշտազանց երգերն, Սարաց գերիներին և անոնց բնակութեանց տէղերն, որոնք անժիանելի են:

1. Հա. Ա. Էլ 125:

յաստանի պորփիւր և պազալտ ը-  
սուած քարերով շինուած էին, որոնք  
100 մէջք բարձրութեամբ կը գտնաւին  
Սևանայ շրջակայրը և Արարատի և  
Արագածի հրադիխային ընդերքն :

Ինչպէս Հռովմայեցոց ժամանակ՝  
ամեն արկմտեան Ջրաներկ Նկարչաց  
ծանօթ էր հայկացն (terra Armeniae)  
զոր յիշէ թէ ովդրասոսո, այսպէս նուե՞ի  
հնումն թարելոնի կիտանկար ապա-  
րաններուն երկնագոյն գեղը կը յաւե-  
լոյր: Մայրս այս քաղաքաց, զոր Ա-  
Գիրք ամենազգի զարդուք զարդա-  
րուած թագուհւոյ կը նմանցըննեն, իւր  
անթիւ ականցը մէջ՝ որք կու գային՝ ի  
չնդկաստանէ, կը համբէր ըստ մեծի  
մասին Հայաստանի բիւրեղն, եղեգնա-  
քարն, ամեթիստոս, շափիղոս, զըմ-  
րուխտ, և քան զամենքը գերազանցող  
Հայքար (lapis Armeniae) կոչուած  
գեղեցկատեսիլ և երկնագոյն ակն, որ  
ըստ վկայութեան կտեսիասի՝ Ասորես-  
տանի մերձակայ լեռներէն կու գար.  
ըստ այլոց<sup>2</sup>, յԱրարատաց և ՚ի Փոքրն  
Հայոց կը տանէին վաճառականք հայաշ-  
դիք Բակեմաս Կամ ուկետուին հայ-  
կական (chriscocolla armeniacæ) ըսուած  
քարն. և միւսն զոր յիշատակեն ընդ  
Պինդոսի մատենագիրը Հռովմայեցոց  
արմենիում<sup>3</sup> յորջորդմամբ, որուն եր-  
կնագոյն և կանանչի զարնող փայլն և  
վլյութիւնն այն աստիճանի էր, մին-  
չև ըստ ասելոյ մատենագրի ուրումն,  
կարծուի թէ Ապողուին և Սուսերա-  
մարտի (gladiatore) հրաշարուեստ  
գործերուն կատարելագործողն և շը-  
նորհք տուղողն եղաւ: Ուր թողունք ա-  
պա հայ վաճառականութեան սամոյրի,  
ընծի, և վագրի թանկագին մուշտակ-

1. Հնդ. Ե. Հերոդոտոս, Ա. էջ 195

2. Պինդոս. Լի. 6-9-10-19: Սաեփաննոս  
Բիւր: Սարարոն մջ. էջ 747:

3. Պինդոս և այլ մատենագիրը Հռովմայե-  
ցոց կը շփոթեն յաման Աքենիում կամ հայկեան  
ներկն, որ կանանչի զարնող երկնագոյն է՝ ընդ  
Արգենտա քարին, որ բաց երկնագոյն է, ըսե-  
լով և քրոց Զ Գլիկուն մէջ թէ և Արմենիա ա-  
ռաք զանուանեան յանուա եւր Ալեքսանդր,  
այս ևս է քար. . և պատուականագոյնն կա-  
նանչ է, որ հարկանի յերկնագոյն»:

ներն որոնց առւրեառութիւնն և կիրա-  
ռութիւնն ինչպէս Արեաց՝ այսպէս նաև  
Ասորեստաննեաց մէջ մեծարդի էին և  
շրջ նշանակի:

Հայոց մուշտակի մեծ վաճառակա-  
ռութեան ապացոյցները կրկին են.  
նախ որ Հայաստան Եռնային երկիր  
ըլլարվ, անրաւ բազմութեան վայրի  
կենդանեաց կը մնուցանէր ըստ վկա-  
յութեան լի. Խորենացւոյ, Փաւատո-  
սի Բուզանդացւոյ, Ղաղար Փարագե-  
ցւոյ, Պինդոսի և Ստեփանոսի Բիւրան-  
գացւոյ: Տառներորդ դարու մատենա-  
գիրը մեր կը յիշեն նոյնպէս. և Թուռ-  
նը փոր իսկ իւր աշքով տեսաւ վազրեր  
և ուրիշ վայրի կենդանիներ յԱրարատ:  
Բ. Ինչպէս Աղուանից՝ պյուղէս ալ Հայոց  
մէջ որսորդութեան արուեստն առ հա-  
սարակ տիրած էր: Տոհմային մատենա-  
գիրը մեր կը վկայեն յաճախ թէ նոյն  
իսկ թագառարաց և իշխանաց ասպե-  
տական կամ քաջարի հրահանգներէն  
և զուարծութեանց մէկն էր՝ որսորդու-  
թիւնն, և թէ խիստ բազմաթիւ՝ էին  
և ընդգրածակաչն որսարաններ Հայա-  
տանի ամեն կողմի:

Երրորդ, ըստ վկայութեան քսենո-  
փոնի, Հայոց և Հայաստանի պէս ան-  
գէորդութեամբ ծաղկեալ ժողովուրդ՝  
գրեթէ չէր գտնուէր այն ժամանակ,  
երբ Յոհնք առիթ ունեցան կը տրել զա-  
յաստան և այն պատճառաւ անշուշտ  
Հայաստանի ճամբան բանեցին:

Եփրատայ վրայ եղած նաւական վա-  
ճառականութիւնն՝ ըստ արտաքին մա-  
տենագրաց՝ շատ նշանաւոր էր հին աշ-  
խարհի մէջ: Եթէ ոչ հարաւէն այլ գէթ  
հիւսիսային և արևմտեան աշխարհը-  
ներէն եկող վաճառականաց մէջ, կըր-  
նակ ըսել ընդ Դավէոնիէի, Փորդէրի

2. Տես Վ. Խորենացւոյ Աշխարհագրու-  
թիւնն: Բայց Ղաղար Փարագեցի կըսէ Արարա-  
տայ համար (Ճի. թէ, «Ունէր զգացաւ մեծա-  
տարածս կ որսացաց»: Վէրինս շուրջանակի պա-  
րարտարածս, զնունեալս երեսն կնշակարածնէր  
և որոճանով և աղոփ ևս բայց ընդ նոսին: Այս-  
պէս և Բուզանդ և Թօվման Յոթրունի յիշեն  
Ապագորական նահանգի և ՚ի հասու Երասմայ  
գմրին առիւծուց, ինչպէս ընձաւց՝ ՚ի Մուկ և  
՚ի Մոփաց գաւառին:

և Հերէնի և Հերոդոտոսի առանց շափազանցութեան, թէ Հայը զառաջին տեղին ունէին յայնմ. վասն զի արուեստական և զարդի վերաբերեալ վաճառքէն աւելի, Ասորեստանեայց ժողովրդոց կենաց ամենակարեն որ պէտքերը կը լիցընէին: Արդարեն, Հերոդոտոս ուզելով այն հարաւային գծին վրայի վաճառականութեան գաղափարը տալ, հայ վաճառականաց ճարպիսութիւնն և անոնց յուռենեաց և 'ի մորթոյ շենուած նաւերուն և վաճառուց նկարագիրը մէջ կը բերէ, որնց մեծագոյններն, իբրև իր ինչ զարմանալի, կ'ըսէ Հերէն մինչև 500 տաղմոնդ կը տանէին: Եւ Դավթունիէ<sup>1</sup>, Փորդէր<sup>2</sup> և Հերէն<sup>3</sup> նոյնակը կը զարմանան:

Հերոդոտոսի այն նկարագրէն կը տեսնուի յայտնապէս թէ հայ ժողովրդոց անդէորդութեան, երկրագործութեան, հիւսնութեան, խալազորդութեան և նաւարկութեան արուեստից հետ, անոնց նաև տնտեսական յառաջնադաշտութիւնը զարմանալի էր: Վասն զի նախ այն նաւերուն փայտն ևս ուրիշ վաճառուց հետ կը ծախէին 'ի բարելոն: Բ. ուրենաւական վաճառականութեան ասպարէցը կը լիննար՝ անդէն և անդ ցամաքայինը կը սկսէր: Որովհետեւ անոնց նաւուց հետ վարեալ բազմաթիւ էլերու և ջորիներու երամակները՝ կարաւաններ ձեւացուցած բոլորվին տարրեր գիծերով կ'ընթանային ընդ աշխարհս Մարաց և Պարսից: Մեծագոյն ճանապարհն որ տանէր 'ի Շօշ, 24 օր կը տեսէր ըստ վկայութեան Հերէնի<sup>4</sup>, բայց լսյն էր և դիւրագնալի, և Պարսից և Մարաստանի մէջ եղած անապատը չանցնելու համար՝ մշակեալ երկիրներու մէջէն կ'անցնէր: ուստի բանակներ անգամ կրնային անցնիլ անտի:

Հայ վաճառականը 'ի բարելոնէ, յլփփիսայ և 'ի Գորիսպապայ քաղսքաց, յորս

1. Ա. էջ 184:

2. Բ. էջ 259:

3. Քաղ. և զնակ. հա. Բ. էջ 254:

4. Քաղ. և զնակ. արև. ազդ. հա. Բ. էջ 239 և 255:

էին ամենէն աւելի հոչակաւոր գործարանք ձեռադորդութեան, կը զնէին աժան դնավ Ասորեստանեայց աննման դեղցիկութեամբ գորգեր, կապերաներ և ասոնց նման ուրիշ բամբակէ և բրդէ հանդերձեղէններ, որոնց նիւթն ևս ըստ Ստրաբոնի, Հայաստան և Միջադեսք Ասորեւոց կանիւալ կը մատակարարէին. և կը տանէին 'ի Շօշ, յԵկրաան և 'ի Բակարա արիական աղջաց ապարանները զարդարելու, որ գեռյետամեաց էին այն ժամանակ և կարօտ այնպիսի ձեռագործաց:

Այսպէս ալ 'ի Շօշէ կ'ընթանային 'ի Փոխւղիսա, 'ի կապագովկիսա և յայլ արևմտեան և հիւսիսային աշխարհս, ըստ վկայութեան Հերոդոտոսի<sup>5</sup> և Հերէնի<sup>6</sup>: Վասն զի այս քաղրէս ելածին պէս՝ ընդարձակ ուղի մը կ'առաջնորդէր անոնց ոչ միայն յլլրատաշատ, 'ի Վազարշապատ, յԱրտիմէտ և 'ի Վան, որք էին շահաստանք յաշխարհիս Հայոց, այլ և յարտաքին շահաստանս Սարդիկեայ, Եփեսոսի, Զմիւռնիոյ, կոմանայ և բոլը Փոքուն Ասիոյ և Պոնտոսի, ինչպէս կը հաստատէ Դավթէրնիէ<sup>7</sup>:

Ուստի կրնանք եղակացընել՝ թէ 'ի Պարսից անկախ եղած շրջաններուն մէջ՝ Հայք էին զօդ միտութեան, հնոյն Ասիոյ քաղաքականացեալազգերը՝ բարբարոս աղջաց հետ կապելու:

Այժմ տեսնենք Հայազգի վաճառականական գործունէութիւնն, կասպից կամ Վրկանայ ծովուն և անոր ափանցը վրայ բնակող ժողովրդոց հետ միաւորող ուղղոյն վրայ:

Այս ուղին, ինչպէս ըսինք, էր ըստ վկայութեան Ստրաբոնի<sup>8</sup>, Պլինիոսի<sup>9</sup>, Քանենոփոնի<sup>10</sup> Երասիս գետը, ընդ որ կը նաւարկէին Հայք ցՈթսոս գետ, և Ալբոս գետով կ'իջնէին մինչև ցահմանակից այխարհն Բակտրիոյ, որուն գլխաւոր շահաստանն էր Բակտրա կամ Բահլ

1. Գիրք Ե. 82:

2. Ավաճ. և քաղ. արև. ազդ. հա. Բ. էջ 251:

3. Համ. Ա. էջ 68 և այն:

4. ԺԱ. գիրք. էջ 509:

5. Գիրք Զ. 15:

6. Խըստ կիւր. էջ 169:

քաղաքն, որ յետոց 450ին նախ քան զբրիստոս եղաւ ոստան Փարթևաց թագաւորաց:

Սակայն եթէ Գլինիոսի ուշ գնելու ըլլանք, Հայստատանէն ելած վաճառուց և վաճառականաց ասպարէզն այս չափով չէր լիննար, թէպէտ և ամեն աղդերէն աւելի արիական աշխարհաց հետ եր Հայոց որ և է վերաբերութիւնն, ուստի և քան զամենայն ազգս Պարսիկը և Մարք Կ'օդտուէին ՚ի բերոց Հայստատանի: Արդարեւ, ՚ի բակտրից կը սկսէր իբարս գետն, ընդ որ անդրագոյն կը փորէին Հայը իրենց բեռնաբարձ նաւերը մինչև ՚ի Հնդկաստան:

Մենք ուրիշ հեղինակութեան մը վրայ հաստատուած, կ'ըսկենք թէ ամենէն հեռագոյն աշխարհն անդամ Զինաց՝ կ'ընդունէր հայ վաճառականաց ձեռքէն յարեւմտեան և հիւսիսային աշխարհաց այն բերքերն՝ որոնց ինքը կը կարօտէր. և իրեն սեփական բերքերն անոնց ձեռքով արտաքս կը զիկէր, ինքն ՚ի բնէ դանդաղ և ուրիշ ազգաց հետ հաղորդուիլ չուղելուն պատճառաւ մինչև ցայսօր: Հուետիսոն իւր վաճառականութեան գրոց ժի գլխուն մէջ, յետ ըսելոյ թէ և ծովն կասպից և Պոնտոսի կը զիւրացընէին զվաճառու Հայոց, զորս վաճառէին Արեաց և Վրկանից ՚ի կարենոր պէտս նոցա», կը յաւելութէ «Այս ճամբով կ'ըլլար ոչ միայն տուրիառութիւն Հիւսիսայնոց, այսինքն՝ Հայոց, ՚ի Պարսկաստան, այլ նաև ՚ի Հնդկաց և Զինաց աշխարհին: Բաց ՚ի վերցիշեալ գետերէն, կը յիշէ Բատրարսն, նոյնպէս Ալաղոն, Սանդովան, Ռեդակէս, կանէս և Արակոսսան նաւար. կելի գետերն ևս Հայստատնի մէջ:

Բայց այն ժամանակի բարգաւաճն Հայստատն, (որ քան զԱսորեստան և զիինհիկաստան հարուստ էր բերովք և Երկրագործութեամբ), գետերունաւարկութեամբ միայն գոհ չէր կրնար ըլլալ, իւր արդիւնաբերութիւնքը բաշխելու առ աղին հեռաւորս և մերձակայս: Հարկ էր որ կարաւանի՝ համառօտագոյն ճամբաններ ևս բանայր:

Թողով ՈՒԴԳԵՐԻ և այլոց աշխարհագրաց այս ամենահաւանական ենթադրութիւնը, թէ ՚ի հնութիւնը Արմեայ և բնիւննեաց ծովակներն ոչ միայն Միջերկրտկանի հետ հաղորդական էին, այլ թէ անոնց տակէն մինչև ՚ի Մարաստան տանող ստորերկրեայ և սկսյադրոք ճամբաններ կային, ուստի ոչ միայն կարաւանք այլ և հեծելագորք անգամ կ'անցնէին պէտքի ժամանակ, կ'ըսենք թէ բացին Հայը կամ առ Պարսոյիր և կամ հաւանօրէն առ Երուանդեանն ցիգրանաւ, ՚ի Կորդուաց լերանց և ՚ի Պարսկահայոց այսպիսի ցամաքային վաճառականութեն գուռն մինչև ցկասրս, որք էին Հայոց սահմանակից ժաղովսւրդք, մանաւանդ Փայտակարանի մի մասն, և յաղգէն կասրից մինչև ցկուր գետ, որուն երկայնութիւնն էր 125 մղն:

Այս ցամաքային ճամբան ոչ միայն եղաւ արքունի ճամբայ ՚ի Շօշ և ՚ի Բաբելոն գացող բոլոր վաճառականաց, այլ նոյն իսկ ըստ Հերոդոտոսի և Հերէնի ՚ի կապագովկիա և ՚ի Պննտոս գնացոց բազմաթիւ կարաւանաց, զորս յետոյ պիտի տեսնենք:

Բաց ՚ի վաճառականութենէ, ուրիշ մեծամեծ անցից և նշանաւոր դիպաց ևս ծառայեց այդ ճամբան: Վարրոն, առ Պինինսոսի կը վկայէ, թէ այս գունէն սկսան Մեծին Աղեքսանդրի ճանապարհորդութիւնքը և շարունակեցին մինչև ՚ի Հնդիկս. և Հերէն նոյնը կը հաստատէ: Հատ հաւանական կ'երկի, թէ նոյնպէս այս գունէն մտած ըլլաց նաև Քսենոփոն ընդ բիւրուն Յունաց ՚ի Հայաստան:

Ուստի այս արևելեան գծերովս Հայքու միայն իրենց աշխարհի յատուկ եղած բերքերն, այլ նոյն իսկ Բաբելոնէն, ՚ի Հնդկաց, ՚ի Զինաց և յասիսական աշխարհաց դնած վաճառքը կը տանէն ոչ միայն առ Աղուանս, և իրեղիացիս, որոնց Հարմոզինա, Արակոս, և

1. Բըրտէք ըստ Պլինիոսի Զ գլ. 15, որ նոյն է ընդ Թրափի դաւանին Պարսկահայոց, ըստ Խոճիշեանի:

ջեմարա՞ կուր գետին վրայ եղաղ քա-  
զաբները նշանաւոր էին, այլ և առ նա-  
րիանացիս, Փանքսանիացիս, Սիրակա-  
ցիս, Արուսացիս և առ Վրկանս, որը էին  
ժողովուրդը վրանաբնակը առ եղերս  
կասրից ծովուն : Ըստ վկայութեան  
Ստրաբոնի և Մալդպուէսնի<sup>1</sup>, Տանայի-  
սի և Ուսրի շահաստանները նշանաւոր  
էին պատուական վաճառուք զոր տա-  
նէին Հայք Տիդրանայ և Միհրդատի  
ժամանակ :

Իրաւցընէ անժխտելի վկայք են այս  
ճշմարտութեանս Հուեաիս և Ստրա-  
բոն : Առաջինը<sup>2</sup> Հայոց վաճառականու-  
թեան վրայ խօսած ժամանակից ետ ըսե-  
լու թէ այդ վերոյիշեալ ճանապարհնե-  
րով կը լուսար տուրեառութիւն հիւսիսա-  
կանաց՝ ընդ Պարսից, Հնդկաց և ընդ Զի-  
նաց աշխարհին, որոնց վաճառքն ևս  
անդրէն Ռասա գետով կասպից ծովը  
կ'ինչեցնէին, կը յաւելու թէ . Այս ծո-  
վին հանելով կը տանէին ընդ կուր գետ  
գէպ 'ի Պոնտոս ուսկից կը տարածուէր  
յԵրոպա: Խսկ երկրորդը կ'ըսէ<sup>3</sup>, թէ  
Վրկանք, Աղուանք, Վիրը և միւս վրա-  
նաբնակ ժողովուրդք, 'ի Հայոց և 'ի  
Մարաց կը գնէին Հնդկաստանէն և  
Բարելոնէն ուղտերամակովք բերուած  
ամենայն վաճառքը :

Այս ազգաց շահաստաններն, յորս  
Հայք նիսեան ձիերու<sup>4</sup> ամիովը երա-  
մակներ կը հանէին 'ի վաճառ, ըստ  
խնդրոյ Աղուանից, և որոնց համար կը  
վկայէ Ստրաբոն թէ ամեն բանէ աւելի  
ձի հեծնել կ'ախտրժէին, են Տալապրո-  
քա, Սամարիանա Գարդա, և Տափէ,  
կ'ըսէ Արխատարուղոս առ Ստրաբոնի<sup>5</sup>:

Ուրեմն ինչպէս կը տեսնէ ամենայն  
ոք, այս գծիս վրայ ևս Հայ ազգի դոր-

1. Բնդհանուր աշխարհագրութիւն, հա . Ա.  
Էջ 111:

2. Գիրք վաճառակ. Ք. Ժ. 3:

3. Գիրք ԺԱ. Էջ 773:

4. Կը զուրցու էլ Երջն Տիգրան Լուկուլ-  
լոսի գէմ պահերամած ժամանակ՝ մինչ 150,  
000 հեծելազօր գումարած ըլլայ. և թէ Հա-  
յաստան իւր անիշխանութեան ժամանակ ամ-  
յամէ 20,000 երիշար կը զրկէր մհրական առնին  
առթիւ 'ի Պարսկաստան:

5. Գիրք ԺԱ. Էջ 776, 777

ծունէութիւն և Հայաստանի վաճառուց  
օգուաներն ամենամեծ եղած են եր-  
բեմի ինչպէս են ցայսօր ժամանակի:  
Բայց մենք թողլով զանոնք մեր պա-  
տուական վերծանողաց իմաստափ-  
րել, գարձնենք պատուհետեւ տեսու-  
թիւննիս արևմտեան գծին և վաճառա-  
կանութեանը վրայ:

Այս վերջին գիծը, որ հարաւային և  
արևելեան վաճառականութեան նա-  
խաճառեալ գիծերն անգամ առ ինքն  
ձգելով կը միացընէր ընդ Պոնտոսի և  
արևմտեան աշխարհաց, էր ըստ Ստրա-  
բոնի եղեմական գետերուն առաջինը,  
որ փիսոն կամ ֆասիս և այժմ ձորով  
կը կուռի:

Վերսախանամ Տեսչութիւնը, զմարդ-  
կութիւնն իւր նախկին խանճարուր-  
քէն, այսինքն Հայաստանէն ընդ համ-  
աշխարհ ցրուած ժամանակ, կարծես  
թէ անոր քառարաջ գետերուն մէջէն  
ճանապարհներ ևս բացաւ՝ այն աեղ-  
բնակող սերնդոց առնել, անտի ելած  
արդիւնաբերութիւնը յօդուտ և 'ի կա-  
րեր պէտա զինի անոնց հասցընելու և  
զանոնք գարձեալ իրարու հետ կապե-  
լու համար:

Արդարն, այս ուղղութեամբ ես հաս-  
ցուց Հայաստան թէ իւր հողին և թէ  
յօտար աշխարհաց բերած վաճառքն. և  
իւր առ ազգս մարդկութեան ունեցած  
անտեսական պարտքն և պաշտօնը լաւ  
կատարեց նախնական ժամանակաց 'ի  
վեր մինչեւ ցայսօր:

Եթէ ոչ հարաւային ազդաց հետ ու-  
նեցած վաճառականական հնութիւնն,  
այլ գէթ նորագոյն տեսութեամբք նկա-  
տելով, կ'ըսենք թէ շատ նշանաւոր ե-  
ղաւ այս կողմի վաճառականութիւնն  
հայ ժողովրեան քան զայն ամենայն:

Այս պատմագիրը, գոդ-  
ցես ամենքն ալ կը ժուին հաստանել,  
թէ Պոնտոսի ծովուն վաճառականու-  
թիւնն ժամանակաւ շատ յետոյ է քան  
զՄիջերկրականին. Ստրաբոն կ'ըսէ, թէ  
նախներ կը վախնային Պոնտոսի նեղու-  
ցին անցնի, և թէ Միհրդատ Եւպատոր  
եղաւ առաջինն՝ որ տիբելով 'ի ծովին

Կիլիկիոյ մինչև ցծովն թոնից և Պռնտոսի՝ ծանօթացորդ զանոնք :

Այսմիւիք մենք ևս համոցուած ենք. որովհետեւ ինչպէս գաղթականութիւնն այսպէս նաև քաղաքականութիւնն և տուրքեառութիւն վաճառուց՝ յԱրեւելց կամ 'ի հարաւային ազդաց անցաւ, Արևելուատ: Սակայն ուշ զնելով արդի խոզարկութեանց, մանաւանդ քաղցէական կամ մարդիքասեան աւանդութեան, պէտք ենք ըսել՝ թէ այդ համեմատութեամբ նոր կարծուած ազդաց իրարու հետ ունեցած վաճառականական հազորդակցութիւնքը՝ յինքեան մտածելով յետոյ չեն քան զլ և զլ գար նախ քան զբրիստոս. և թերեւս երեքտասաներորդ դարուն իսկ սկսած էր անոր շարժումը, թէպէտ և ոչ միշտ շարունակուած:

Եւ իրգոք էր յիշէ Եւսերիոս, փիւնի. կեցւոց ճանապարհորդութիւն մի 'ի թիւթանիսա: իսկ Ստրաբոն՝ կը յաւելու, թէ առ Հոմերոսիւ կ'ըլլար արդէն տուրքեառութիւն վաճառուց հիւսիսային կիմմերիացոց հետ, որ 'ի տաւրիկեան քերասոնի:

Սակայն որ և իցէ պատմական և առանձին վկայութենէ աւելի՝ թունաց ժողովրդական և ընդհանուր աւանդութիւնքը՝ մեծ լցո կը ծագեն արեմտեան դժի վաճառականութեան վըրայ: Թող չի վարմնան ընթերցուքը՝ մեր այս հարցմանը վրայ, թէ ի՞նչ կը նշանակեն Հերակլեսի աշխարհակալութիւնքն և անոր յաղթական կոմոզներն, որք կը տեսնենին յիերերիա (Սպանիա) և յեղեր Միջներկրականի: ի՞նչ կը նշանակեն իրաւոցընէ Արգոնաւորդաց արշաւակն 'ի կողքիս և յայլ և այլ աշխարհս:

Արդի երևելի քննադատից, չէրէնի և Փ. Շմիթի և այլոց վկայութեանը վրայ հաստատուած կ'ըսենք, թէ անոնք անժխտելի ճշմարտութիւնք են նախապատմական կամ անյիշտատակամանակի դաղթականութեանց և վա-

ճառականութեանց լնդ հիւսիսակազման ընդ արևելուատ կամ 'ի ծովափունս Պռնտոսի: Բայց ժողովրդական առածք և թուիչք քերթողաց՝ յետ Տըրովական պատերազմին վիպասանութեամբ զարդարեցին զանոնք սակայն ոչ եղջին զիլսովին:

Արդարեւ, նոյն իսկ երեակայեալ խոյն այն ուսկեցեղմ բաւական է ցուցանել արգունացորդ կողուած վաճառականաց և անոնց վաճառուց որպիսութիւնն, եթէ ուրիշ եղրակացուցիչ հաւասուիք ևս պակասէին: Վասն զի ըստ Հուետոսի և Հէրէնի, այն երկիրներու զինաւոր վաճառքն էին և են մինչեւ ցայսօր ոսկի և մորթ ոչխարի և այժի, որոնք նիշու ոսկեցեղման խոյի զաղափարը կու աւան: Այսպէս նաև Այետասայ զստեր Մէդէայի վիպասանութիւնն 'ի Մարաց, կամ լաւ ևս ըսելով, կովկասային գեղեցիկ ցեղերէն և մասնաւոր կերպով Զէրբէզներու կոյսաղջկանց վաճառելուն ստուգութիւնը կ'ապացուցանէ, զոր կը գնէին փիւնիկեցիք և այլք, ըստ վկայութեան եղեկի Շմիթի՝ իւ նոյն իսկ պատմական և ամենայայոնի ժամանակաց մէջ, ամեն աշխարհի հնչած էր անոնց գեղեցկութեան և վաճառուելուն համբամ, և ըստ վկայութեան Հէրէնի, մինչեւ ցայսօր Պարսից Շահներուն և Ցածիկ Սուլթանաց կանանցներուն առաջին տեղը Զէրբէզները կը բռնեն:

Արևմտեան վաճառականութեան դոյութիւնն ստուգելէն յետոյ, կարեսր ինդիրն յայսմ կը կայանայ, թէ ո՞ր ազդն եղաւ անոր նախնական շարժիչն, և թէ ո՞ր ազա ծաղկեցուցին զայն և ամենէն աւելի նշանաւոր եղան յայնմ:

Յունաց արդեզք թէ կողքիսացւոց և կամ անոնց սահմանակից ուրիշ ժողովրդեան մը ընծայելի է մարդկային ընկերութեան այդ ամենօդտակար արհեստն: Ոչ. վասն զինախ ինչպէս ըսուեցաւ, ժողովրդականութիւնն և բազմա-

մարգութիւնն՝ հարաւէն և յարեելից դէպ յարեմուտս տարածուեցաւ : Բ. կը համարձակինք ականաւորքնաղաւարի՝ մը հետ ըսել, թէ Յունաստան երբ զառավնինն ունեցաւ իր Սողոնն (քաղաքականութիւնը), Փոքուն Ասիոյ քաղաքաներն արդէն իսկ հասած էին իրենց յառաջխաղացութեան բարձրագոյն կէտքը : Թերեւս ըսուի, թէ Մարք եղան կամ Պարսիկը : Այս իսկ չէ այնչափ ընդունելի և համաճայն հին աւանդութեան : Արովչեսու Մարք 760 թուին Աստղեստանեայց Նահանգ էին և հարկատու, և 655-635ին ունեցան իրենց միահեծան պետութիւնը : Իսկ Պարսիկը՝ 529 թուականին նախ քան զբրիստոս, Մեծին կիւրոսի ձեռքով : Եւ Դարեհի Վշտասպեայ ժամանակ, որ Պարսից աշխարհակալութեան ընդարձակագոյն ժամանակն եղաւ (522-512), արեմուեան 12 կուսակալութեանց մէջ Արմենիք և կապադովիկիա կը յիշատակուին միայն, զորս ընթեռնու լասուն դերսեպողեայ հին արձանագրութեանց կամ սեպաձևներու մէջ :

Ուստի կը մնան Փինիկեցիք և Հոյք՝ կրին ազգք հնագոյնք և մերձաւորք : Յիրաւի Փինիկեցւոց վաճառականութեան հզօր ազգեցութիւնն՝ ինչպէս Մեծին Ասիոյ, այսպէս նաև Փոքուն Ասիոյ կամ Պոնտոսի գծին վրայ՝ անժխտելի է, և կը խոսանովանինք՝ եթէ ոչ գաղթականութեան, այլ գէթ վաճառականութեան առաջին շարժմունք տուողն իսկ անոնք եղած ըլլան : Բայց Հէրէնի<sup>2</sup> հետ չենք տարակուսիրյաւելով, թէ անուղղակի կերպովշարունակեցին զայն : Իսկ ուղղակի կերպով, Թորդումացիք կամ Հոյք եղան հանդերձ իրենց հարկատուկապադովիկեցւոց, Թովովէն և Մոսորի վաճառականներով : Այս ժողովրդոց և Թորգումացւոց նկատմամբ եղած դժուարութիւնքը, Պոշար<sup>3</sup> և Միքայէլիս<sup>4</sup> լուծեցին :

1. Հէրէն. Քաղ. և քննկ. հին ազք. հա. Բ. ու. Բ. էջ 27:

2. Քաղ. և քննկ. հին ազք. հա. Բ. ու. էջ 143:

3. էջ 200 և 207: 4. Spicileg. I, 44, 67:

Այս ճշմարիտ ենթաղրութիւնը շատ լաւ կը միաբանի քաղղէական<sup>1</sup> և տոհմային աւանդութեան հետ, ըստ որում Հոյքը Արամաւ կը տիրեն բնական աշխարհակալութեամբ Փոքուն Ասիոյ և Պոնտոսի մի մասին : Եւ արդարն, ըստ Վկայութեան Ռատուինսընի և բնեառագոց, ինչպէս Բ գլխուն մէջ տեսանք, յարեթական ցեղիս այս միապետութիւնն եթէ 1300ին և կամ երբ այս կսած ըլլար, տեեց բաւեց 'ի լերինս Հայոց նոյն իսկ բոլոր Ասորեստաննայց և Մարաց պետութեանց միջոցին : Ազգային և վիշապազանց երգերն և հնաւանդ գրոյցը կը հաստատեն թէ ինչպէս Մեծին, այսպէս ալ Միջին Տիրուանայ և Արտաշիսի ժամանակ՝ Հայաստան անկախ էր, և Պարսից ազգէն աւելի, որ 'ի բացեայ էին, ինքը մերձաւորապէս կը գործէր այն գծերան վրայ : Պարսիկը թէպէտ և 536ին, կիւրոսի ժամանակ զօրաւոր էին, ըստ Քիւնովոնի, քանզից այսպէս ալ Վարպէտ կը ասուակալի և Զարեհի որ նոյնայէս յամին 190 կուսակալ էր Փոքուն Հայոց Արտաշիսի Ա և Վաղարշակայ օրերը՝ Հայոց ազգեցութիւնը զօրացաւ մինչեւ ցԱրտաշիր<sup>2</sup> և ցՇապուհ Բ թէպէտ և յարեմուեան պատմից ումանք չի գաղըեցան զդորմունէութիւնն Հայոց՝ Պարսից տալ, մանաւանդ որ գեռաւ աւելի զարմանարի է Մարաց ընծայել, մինչեւ գեռաւ Մար անոնըն հազիւ թէ մնացեր էր այն ժամանակները :

1. Մարքիրասեան կամ Մ. Խորենացւոյ պատմ. Ա. գլ. Ժ. էջ 71:

2. Մ. Խորենացի իւր պատմութեան Բ գրոց Հէ զլինուն մէջ կը մնան Մեծին ասուական աշխարհութեան մէջ իւրաքանչ մեծին Հայոց և Փոքուն կը նորոգէ « զահմանն հաստատեալու Արտաշեսէ, զարդինս յերկիր Կացուցանելով և յիւր անունն փոխելով արտաշերական անուաննաց » կ'ըսէ :

Այսուհետեւ հայ ավգի վաճառականութեանց հզօր ազդեցութիւննապացուցանելու համար յարեւուտս, զառնանք առ Ստրաբոն։<sup>1</sup>

Այս հմուտ աշխարհագիրն Հայոց մասին գրած ժամանակ, զաւանդութիւնս Յունաց մէջ բերելով, կ'ըսէ. և Պատմեն<sup>2</sup> թէ Արմենիոս՝ Յասոնի հետ ճանապարհորդեց 'ի Կողքիս, յիրերիա (Վրաստան), յլլուանս, 'ի Հայաստան և 'ի Կողմանս Մարաց։<sup>3</sup>

Աստ, մեր աշխարհի աւանդութիւնն, զայդ ընդ քաղդէականին, չի կրնար զԱրմենիոս զայս Հայոց նախահայր ընդունել, ինչպէս ուշիմ քննադատութիւնը՝ պէտք չէ Յունաց այդ հնաւանդ զրոյցը՝ բոլորովին առասպելական վէպ մը համարել: Գոյ անդ մասն ինչ հիմնական ճշմարտութեան. կայ և ուրիշ մաս մ'ալ որ վիրապասնական զարդի տեղ միայն ծառայած է:

Ուրեմն ուզիդ խորհելով՝ հաւանական է այսպէս եղբակացնել թէ Արմենիոս այս մասնական՝ ընդհանուր զԱրմէնին կամ զՀայ ազգը կը ներկայացընէ. ինչպէս անոր արգոննաւորդաց (կամ վաճառաշահ նաւուց) հետ արշաւած տեղերն՝ Հայոց վաճառականութեան ընդարձակութիւնն և գործունէութիւնը կը ցուցընեն, ամենահին ժամանակի մէջ։

Արդարեւ, նախնական դարերէն սկըսեալ մինչև ցայսօր, կրնանք առանց երկրայութեան հաստատել թէ Հայ ազգի վաճառականութիւնը զէպ 'ի Պոնտոս տանող գծերուն վլայ, ամենէն աւելի նշանաւորն և օգտակարածոյնն եղաւ մարդկային ընկերութեան։ Վասն զի գոզգես միշտ գաղթականութիւնն ևս անոր հետ գեղեցիկ կը լիցընթանար. Այս գծիս վրայ թերեւ Հայքի աւելի քանի գիրեցի լընդարձակուող և գործօն ժողովուրդ եղած ըլլան։ Ամեն աղդերէն աւելի անոնց վաճառքն և վաճառականները կը լիցը-

նեն Պոնտոսի և անոր շրջակայ ազգաց շահաստաններն : Այ միայն հին և նոր մատենագիրք Յունաց և Հռովմայեցոց՝ Հէրէնի և Ստրաբոնի հետ, ամենէն աւելի Հայոց վրայ կը ճոխանան, այլոյն իսկ անոնց նախընթացդարուց գաղթականութեան պայքի ազգի յիշատակարանքն և կոթողները.<sup>4</sup> հետ զնետէ կը յայտնուին Սկսկ ժողովուրդ եղած ծովուն եղերքն և անդր իսկ քան զԱն ծով, զոր յետոյ պիտի տեսնենք։

Տրապիզոն և Սինոպ, իրենց անյիշատակ ժամանակի հնութեամբ և փառաւոր յիշատակօքը. Հայոց և Պոնտոսի շահաստաններէն պատուականագոյններն էին, կ'ըսէ Ստրաբոն։<sup>5</sup> Սակայն վերջնը յետ Տիգրանեանց և Միհրգատեանց այնպէս ինկաւ, չի գիտցուիր ինչ պատճառաւ, որ միայն իրեւ ըստուեր իւր անցեալ փառաւորութեանն այս մթին առածը թողուց 'ի բերան ժողովրոց, թէ « Որ պակասէրն 'ի գործոց (վաճառուց), որմով պատէր զՀայաստան »: Իսկ Տրապիզոն՝ միշտ պահեց իւր համբաւն. և այժմ իսկ իրեւ կեղրոն իմմ է և զուռն ընդ Ասիա և ընդ Եւրոպա, աստի անդք և անոնի այր փոխադրելու համար զվաճառու։ Գարիրա էր քաղաք մեծափարթամ. հոն էին Միհրգատասայ և Տիգրանայ գանձերն և շըեղ արարուածքն, որ յետոյ ցանուն Պոմպէոսի՝ Դիոսպոլիս կոչուեցաւ։ Զելա, Մորիինա և կումանա՝ կըրկին տեսութեամբը էին հոչակաւոր, այս ինքն է վաճառականութեամբ կրօնական մեծամեծ արարտութեամբը։ Հօնէին Անահատոյ և Լուսնի տաճարներն իրենց նուրիրական դաշտերով և քրմական անթիւ դասակարգութեամբք. Այս

1 Ցամքն 1878 ապրիլ 25 Մոսկուայի ուսումնական առաջնաժողովովներկրորդնամախնէշկարդացուցաւ բնակութ Զերնեաւուսկու մէջ գրութիւնը Ան ծովից արևելքան եղեցը գտնաւած հութեանց մասին, յորում պարունը մասնացոց կու ասյ մի նորագիւտ հայկական հութեանց վրա. Բայց գետ յայտնի չէ, և կը յուսունք թէ Տիգրիսի հագիստական ժողովրեն ժամանակ կը յայտնուի։

2 Գիրք ԺԱ. Էջ 821.

շահաստանները կ'ընթանային խուռն բազմութեամբ ամենայն ազդք և ազինք, 'ի դաշտաց և 'ի քաղաքաց, կ'ըսէ Ստրարտն<sup>1</sup>, ածերվ իրենց հետ զհօտա անամուց և ամեն տեսակ վաճառուց մուտք Սակայն նոյնը կը յաւելու թէ պատաւականագոյնքն և մեծամեծքն էին եւ կաւորքն 'ի Հայոց : Բաց 'ի վաճառուականաց՝ կ'երթային նաև գունդագունդ բազմութիւնք արանց և կանանց և մատաղերամ պարք հայկազուն զստերաց՝ ուխտազութեան, երգման, զոհագործութեան և տօնավաճառուց պատճառաւ : Կուտանք մեծամեծացն Հայոց առ հասարակ Անահատայնուիրեաւ ըլլուլով, կը տանեէին իրենց հետ ամբաւ գանձը և իշխատակս ոսկուոյ և արծաթոյ, ականց պատուականաց, և բազմութիւնս երկսեռ գերեսց, իրենց ծառայիցընելու համար : Վասն դի բառ վկայութեան Ստրարոնի և Հերէնի գերմանացոյ, իրենց նախնական տարիներն՝ այն դից և քրմապետաց հովանաւորութեաններք և կ'անցընէին :

Զի գիտութիւ ստուգիւ, արդեօք վաճառականական տուրեառութիւնը կանուխն է այս քաղաքաց մէջ ժամանակու, և պատճառ կրօնական արարողութեանց և երթեւեկաց, թէ վերջինը՝ տուրեառութեան պատճառ և հետեւանք եղած է : Սակայն այս յայտնի է, թէ վաճառականութիւնն և կրօնի Հայոց՝ սերտիւ կապակցեալ էին ընդ միմեանաւ Տօնք քրմաց՝ էին նոյնպէս տւուք մեծամեծ տօնավաճառուց :

Մոռքիկոս քաղաքն ես երեւի էր Հայոց վաճառականաց բազմութեամբը : Ստրարոն կ'ըսէ, թէ կողքիսացւոց և իւղերիացոց տաճարէն զատ՝ կար նաև Հայոց մասնաւոր տաճար մը :

Փեսինունդ քաղաքն ես Փոքիդիոյ, որ ըստ ասելոյ Հերէնի<sup>2</sup>, Հայաստանէն 'ի Փաքրն Ասիա գնացող կտրաւանաց ճամբուն վրայ կ'իյնար, նոյնպիսի կրօնական գասակարգութեամբ համբա-

ւուր էր, ինչպէս նաև Միլետ կամ Միլիտինէ, ուր 100էն աւելի վաճառական ժողովուրդք կամ գաղթականներուն և վաճառականաց ձեռքով ծաղկեցան, երբ ոչ Քարերսէսք, ոչ Դարեհնք և ոչ կիւրուք Փաղաքներն, որոնք արևելեան Ասիոյ և հոյազգի զաղթականներուն և վաճառականաց անգամ՝ այն քաղաքաց վարչութեան և ծագման վրայ խօսելով, կ'ըսէ, թէպէտ և յոյտնի չէ գեռ, ասկայն աւանդութիւնն յսնցիշատակ հնութիւնն անգր 'ի վեր կը հանէ անոնց ծագումն զաղթականութեամբ :

Ամենէն աւելի մեծահոչակ շահաստանն, որ Փասիփին աւարկութեան սոհն մանածայրը կ'իյնայ, եր Դիոսկորիս որ 'ի կողքիս : Այս հինաւուրց քաղաքն, որ Եւպատորի կ'ընծայուի, ոչ այնչափ մեծութեամբ, որչափ բազմալեզու աղաց վաճառական տուրեառութեամբը՝ կը մրցէր արգարն ընդ Տիւրոսի և ընդ Բաբելոնի :

Կողբիսի և հիւսիսային ոսկեհանքներն՝ աստի և անտի՝ հայ վաճառականաց ճարպկութիւնը, հօն կը ձգէին բոլոր ծովեղերեայ և խուժագուժ աղերն անդամ՝ Տիւրարինիացիք, Քաղդակը, Խալիքը, Մոսկը, Սովորինացիք և կողքիսարնակ ժողովուրդք, որոնք Տրապիզոնէն ցփոր Հայոց եղած միջոցը կը բնակէին, երբեմն ազատ իշխան երբեմն ալ Հայոց թագաւորներով կը կառավարուէին, կ'ըսէ Ստրարոն<sup>1</sup> : Եւանդուշտ կամ՝ այս պատճառաւն է և կամ՝ Հայոց մեծամասնութեանը համար, որ օտարազգի մատենագիրը Արմենօխալիպս կը կոչեն զմասն մի կողքի սացւոց և խաղութեաց :

Դիմութենէօն՝ առ Պլինիոսի<sup>2</sup> կ'աւանդէ, թէ մինչեւ 300 այլալեզու ժողովուրդք կը միանային 'ի Դիոսկորիսա

<sup>1</sup> Գիրք ԺԱ. էջ 837.

<sup>2</sup> Գաղ. և գն. հին աղք. հա. Ա. էջ 183:

կարենոր վաճառուց համար. Այս կարենոր վաճառուցն կովկասային ազգաց և Պոնտոսի ժողովրդոց համար, որոնք խաչնադարմանը էին ըստ մեծի մասին, էին ցորեան, վուշ, բժշկական բյուզ, արմտիք, խաչնդեղ, և ամենէն աւելի մեծարգին էր ըստ Ստրաբոնի՝ ազն, զոր հայ վաճառականք կը տանէին կարաւանք և գետերու նաւարկութեամբ իրենց Դարանալի, կողբայ, կաղզուանի, Հարուրայ և Լանասէնի աղահանքերէն<sup>1</sup>:

Իսկ արևելեան և հարաւային քաղաքակրթեալ ազգաց համար, կարենոր վաճառքն էին մեղր, մոմ, մորթ ոչխարի և այծի, մուշտակ, բուրդ, ոսկի, պղինձ և անագ: Վերջին վաճառուց համար կը ըստի ըստ կարծեաց հասարակաց, թէ սկզբնապատճառք եղած ըլլան փիւնիկեցւոց վաճառականութեան և անոր տարածուելուն. որովհետեւ ամենայն քաղաքական և զինուորական ազգք միշտ պէտք ունէին պղնձի և անագի: Ռւսափ այս կարենոր և անհրաժեշտ պէտքը հոգայորք՝ հայ վաճառականք էին ուղղակի կերպով, նախնական ժամանակաց մէջ. և Եզեկիէլի վկայութեանը վրայ յիշեալ կրնայ ըստի ընդ Փ. Շմիթի և Հէրենի, թէ իրենց սահմանակից և հարկատու թովքէի, Մասքի և կապադովիկեցւոց վաճառականաց հետ, կ'ինչ նեցընէին ընդ Փասիխ և ընդ Լիւկոս գետ և Գեսասինունդ շահաստանէն անցնող կարաւանի ճամբով՝ ի կապադովիկիա, և անտի՝ կը տարածէին յիրասխ, յիփրատ և մինչև յԱլիս գետերն և անոնց ափանցը վրայ կառուցեալ այլ և այլ ազգաց շահաստանները. Այսուհետեւ ուղղակի կը սկսէր Փիւնիկեցւոց

1. Արդարեւ, Հայաստանի այդ վերյշեալ գաւառաց յաւերժական ազն բուշերն այնշափ դարերէ ՚ի վեր մինչև ցայսօր չեն դադրած տակաւն ոչ միայն մերձաւոր՝ այլ և ամենայն հեռաւոր ազգաց կարերը պեսայքն հոգալէն: Են այժմ ամենէ աւելի կրնակը ըսեւ, թէ անոնք են Ռուսիոյ վաճառականութեան կենադանութիւն առուղը, եթէ աշքերնին գարուն եւըս ըլլակը այն աեղերէն մեկունք առնաւուայ կարաւանացը վրայ, որոնք կ'ընթանան ՚ի Պարուաստան, ՚ի Կովկաս և յայլ և այլ աշխարհ:

վաճառականաց գործունէութիւնն և վաճառուց տուրեառութիւնը՝ ՚ի Մըներ կրականին և հարաւային աշխարհն: Եւ ըստ վկայութեան Հէրէն<sup>1</sup> գիտնականին, Փիւնիկեցւոց այս կողմի վաճառանութիւնն ընդ հիւսիսայնոց, արծաթով չէր ըլլար բնաւ, այլ փոխանակութեամբ հարաւային և արևելեան վաճառուաց:

Հայոց ուղղակի գործունէութիւնն և վերյշեալ վաճառուոց կամ մետաղաց տուրեառութիւնն անժխտելի ընելու համար, բաւական կը համարինք մէջ բիրել պատմական վկայութիւն մը և ամենասուոյգ շրջան մը ժամանակի: Քանոնուն իւր նահանջ թիւրուն զրոց մէջ կը վկայէ, թէ կորդուաց և Հայոց տուներուն մէջ այնչափ բազմութիւն և հարուստ տնական և երկրագործական կահ կարասիք տեսաւ, զոր բնաւ տեսած շունէր այլուր:

Հայ ժողովուրդն, միայն Պոնտոսի ափանցը վրայ ՚ի բաւականացաւ թողուկ իւր գաղթականութեանց և վաճառականութեան հետքերն, այլ յանուն Արմենոսի՝ թերեւս անդրագոյնս ևս վարեց իւր հսկայաբայլ ընթացքն ամբողջ Սկս ծովուն երկայնութեամբ: Անցաւ Անատոլիային մինչեւ ՚ի թեսալիի և Լարիսաս գաւառս Յունաստանի, եթէ կը ներուի ըսեւ, թողլով զինի իւր զԱկիիսինի, զԱկիւսիրիփուս, զԾոփս, զկալաքէն և զԱզիաբէնս՝ ծաղկաւէտս բնաւ կշօք և քաղաքականութեամբ. մինչդեռ Փիւնիկեցիք Մինչերկրականէն յառաջ կը խաղային, յանուն կադմոսի և կեկրասիք գաղթականութեանց կամ վաճառականաց:

Արդարեւ, պարզապէս ենթագրութիւն չէ այս, այլ արդի քննադատութեամբ ՚ի հնոց վկայեալ ճշմարտութիւն մը, թէպէս և ոչ հրատարակեալ: Հէրէն<sup>2</sup> կ'ըսէ, թէ Անատոլիայոյն ժողովուրդներէն շատ յառաջ՝ Ա-

1 Քաղ. և վճռէ. հին ազգ. արեւ. հտ. Բ. էջ 145:

2 Քաղ. և վճռէ. հին ազգ. հտ. Ա. էջ 139:

սիայէն եկող գաղթական ժողովուրդք բնակեցան և ծաղկեցուցին:

Այսպիսի շատ աւելի լրացաւոր է և եզրակացուցիչ թունաց անցիշատակ ժամանակի ժողովրդական մէկ աւանդութիւնն Հայոց մասին, զոր Ստրառոն՝ մէջ կը բերէ, ևս և կիրսկիրս փարսալացին և Մեդիոս լարիսացին, որոնք զօրավարեցան ընդ Մեծին Աղեքսանդրի, կը հաստատեն: Բ. Բաց՚ի այս աւանդութենէն, զոր քիչ ետքը պիտի լուսաբանենք, կը գտնուին դեռ՚ի թերապիա այնպիսի հետքեր և անուանց և տեղեաց յիշատակութիւնք, որոնք ըստ բաւականին կը ցուցընեն, թէ Արմենիոյ՝ Արծիսսա կամ Արճէշ քաղաքի, Քաղունեաց ծովակին և Երասխայ ափանցը վրայ բնակող ժողովուրդըն՝ այս հետևեալ երկիրներն ևս ուղիւսած էր ժամանակաւ, որոնք են Ա. Արձիսսա կամ Արճէշ, որուն համար կը ծանուցանէ յոյն աշխարհագիրը թէ իւր ժամանակ Արկուրա կը կոչուէր համանուն մեր հինաւուրա Արկուրուց կամ Ակոռայ, և Պինէսսի մօտ էր, Բ. Երասխ (Պինէսս) գետն: Գ. Արմենիոս կամ Արմենիոս կոչուած քաղաքն առ Բիրէաւ, զոր Մկեղպիսայլ ընդ այլոց՝ Փիւնիկեցւոց հայրենիք կը կոչէ, և իբր թէ անտի փախաւ Փիխաս՝ Պելիացւոց թագաւարին քով, Ամինտորայ հօր Արմենիկասին ձեռքէն աղասելու համար:

Այս խորհրդաւոր անուանց և տեղեաց ստուգապատում մեկնութիւն մի տալրւ համար, պէտք ենք վերադասնալ առ Ստրառոն: Նա<sup>2</sup> Հսոյ ազդին ծագման և հնութեան վրայ խօսած ժամանակ, Յունաց ժողովրդական զրոյցը կը յիշէ ըսելով. « Այսպիսի հնախօսութիւն է զատցէս զայսմանէ, Արմենոս՝ Արմենիոսէ ի թետալական քաղաքէ,

1. Գերք ԺԱ. Էրե 812 և այլուր:

2. Գերք ԺԱ. Էջ 802:

որ կայ ընդ մէջ ֆերաց, և լարիսսա՝ առ Բիրէաւ, էանց միծաւ բանակաւ՝ ՚ի Հայաստան կամ յԱրմենիա», որ անոր անուամբ այսպէս կոչուեցաւ ապահ. Երասխ գետը կամ Պինէսս՝ ըստ Յունաց՝ յԱրմենիոսէ կ'ըսեն ընկալաւ իւր անունը, Պինէսսի նման ըլլալուն պատճառաւ, որ էր անուանակից նորա: Վասն զի կ' աւելցընեն կիրսի. ըստ և Մեդիոս, թէ Պինէսսն ևս երբեմն Երասխ կը կոչուէր: Գ. Այս զօրավարներս, որոնք Աղեքսանդրի հետ Հայաստան իսկ մտան, կը հաստատեն թէ Հայոց զգեստներն և սովորութիւնքը մի և նոյն էին ընդ թետալացոց:

Յայտնապէս կը տեսնուի թէ Հիմնական հշմարտութիւն մը կայ այդ աւանդութեանց մէջ, զորս յոյն ժողովուրդք՝ կամ պատմութեան տեղեակ չըլլալով կամ իրենց ազգին ծագումն աւելի վեր բարձրացըներու դիտմամբ, որ խիստ շատ տեղ կը տեսնուի, աղաւաղիր է զանննը:

Ստուգիւ զլիքմենոս կամ զՀայոց՝ ՚ի Յունաստանէ ՚ի Հայաստան գաղթած համարիլն, այնչափ հակառակ է հասարակաց քննադատութեան և ծաղրական, որչափ որ ուղինք պնդել թէ նախին դադիմականութիւնն և քաղաքականութիւնն՝ յԵւրոպիոյ յԱսիա ծաւաղիր է: Ուրեմն եթէ չենք ուղեր պատմութեան հակառակիլ, և մանաւանդ եթէ կ'ուղենք անոր խորհրդական խաւարըն ես փարատել, պէտք ենք ենք եղրակացնել թէ Հայք հինաւուրց, գաղթականի և վանձառաշահ ժողովուրդք, Փոքր Ասիայէն կամ յԱնաստղիոյ ցամագային ճամբով տարիին մինչև ՚ի Յունաստան իսկ զվաճառս և զքաղաքակրթութիւն Ասիոյ, եթէ ոչ Արամայ, այլ գէթ անոր յաջորդող հայկազունի իշխանաց առաջնորդութեամբը:

Կը շարուակուի:

Հ. Բարսեղ Սարգսսան